




association pour la prévention de la torture
asociación para la prevención de la tortura
association for the prevention of torture



ԿԱՆԱՅՔ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ԿԱՅՐԵՐՈՒՄ. ձեռնարկ գեղերային զգայուն մշտադիտարկման համար



ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ԿԱՅՐԵՐՈՒՄ ՄՇԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԶԵՌԱՐԿ

ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ

ՆԵՐԱՌՈՒՄ Է 2015թ. ԿԵՐԱՆԱՅՎԱԾ ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ՀԵՏ
ՎԱՐԿԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՍՏԱՆԴԱՐՏ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ
(ՆԵՒՍՈՆ ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ)

ԿԱՆԱՅԵ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ.

ԶԵՆԱԴԿ ԳԵՆԵՐԱԶՅԻՆ ԶԳԱՅՈՒՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

«Միջազգային բանտային բարեփոխումներ» կազմակերպությունը (Penal reform international) և Խոշտանգումների կանխարգելման ասոցիացիան (Association for the Prevention of Torture/ APT) շնորհակալություն են հայտնում Թոմրիս Աթաբային սույն փաստաթղթը պատրաստելու համար:

Սույն ձեռնարկը ստեղծվել է «Միջազգային բանտային բարեփոխումներ» կազմակերպության՝ «ԱՊՀ 9 երկրներում խոշտանգումների դեմ պայքարում ինստիտուտների ամրապնդումը և քաղաքացիական հասարակության ներուժի կառուցումը» ծրագրի շրջանակներում՝ Խոշտանգումների կանխարգելման ասոցիացիայի հետ համատեղ՝ «Ժողովրդավարության և մարդու իրավունքների եվրոպական գործիքի» (European Instrument for Democracy and Human Rights/ EIDHR) ֆինանսական աջակցությամբ:

Փաստաթղթի վերահրատարակումը և թարմացումը, որը ներառում է 2015 թվականի՝ Բանտարկյալների հետ վարվեցողության ՄԱԿ-ի Նվազագույն ստանդարտ վերանայված կանոնները (Նելսոն Մանդելայի կանոններ), հնարավոր է դարձել Մեծ Բրիտանիայի կառավարության ֆինանսական աջակցության շնորհիվ:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է բացառապես «Միջազգային բանտային բարեփոխումներ» կազմակերպությունը, և այն ոչ մի պարագայում չի կարող համարվել Եվրամիության կամ Մեծ Բրիտանիայի կառավարության դիրքորոշման արտահայտություն:

Սույն փաստաթուղթը թույլատրվում է ազատորեն ուսումնասիրել, համառոտագրել, վերահրատարակել և թարգմանել հատվածաբար կամ ամբողջությամբ՝ երաշխավորությամբ, որ այն չօգտագործվի վաճառքի կամ առևտրային նպատակներ հետապնդող այլ գործունեության համատեքստում: Փաստաթղթում կատարված ցանկացած փոփոխություն պետք է հաստատվի Միջազգային բանտային բարեփոխումներ կազմակերպության կողմից: Պատշաճ հղումը «Միջազգային բանտային բարեփոխումներ» կազմակերպությանը և սույն փաստաթղթին պարտադիր է: Հարցերն ուղարկել հետևյալ էլ. փոստին՝ publications@penalreform.org

Ձևավորումը՝ Չոն Բիշոփի:

© Penal Reform International 2015.

Penal Reform International
60 – 62 Commercial Street
London E1 6LT United Kingdom
Հեռախոս: +44 (0) 20 7247 65 15
Email: publications@penalreform.org
www.penalreform.org

Association for the Prevention of Torture
PO Box 137
CH-1211 Geneva 19, Switzerland
Հեռախոս: +41 (22) 919 21 70
Email: apt@apt.ch
www.apt.ch

Միջազգային բանտային բարեփոխումներն (ՄԲԲ) անկախ հասարակական կազմակերպություն է, որը մշակում է քրեական արդարադատության խնդիրներին արդար, արդյունավետ և համարժեք արձագանքելու մեխանիզմներ և նպաստում է դրանց ներդրմանը:

Մենք խթանում ենք ազատագրված հետ չկապված պատժամիջոցների կիրառումը, որոնք նպաստում են դատապարտյալների վերաինտեգրմանը, և պաշտպանում ենք ազատագրվածների՝ արդար և մարդկային վերաբերմունքի արժանանալու իրավունքը: Մենք պայքարում ենք խոշտանգումների կանխարգելման և մահապատժի վերացման համար, ինչպես նաև աշխատում ենք արդարադատության համակարգում երեխաների ու կանանց նկատմամբ արդար և համապատասխան միջամտությունն ապահովելու նպատակով:

Ներկայումս մենք ծրագրեր ենք իրականացնում Մերձավոր Արևելքում, Հյուսիսային Աֆրիկայում, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում, Կենտրոնական Ասիայում և Հարավային Կովկասում, ինչպես նաև աշխատում ենք Հարավային Ասիայի մեր գործընկերների հետ:

Մեր ամենամյա էլեկտրոնային տեղեկագիրը ստանալու համար գրանցվեք հետևյալ հղմամբ՝ www.penalreform.org/keep-informed.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐՆ ԻՆՉՈՒ ՊԵՏՔ Է ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁՆԵՆ ԱՅՍ ԽՆԴՐԻՆ	6
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԸ	7
1. ԳԵՆԴԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԼԻՐ ՄՈՏԵՑՈՒՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻՆ	7
2. ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	8
ՌԻՍԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐՆ ՈՒ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	10
1. ՈՐՈՇ ՀԱՄԱՏԵԶՍՏԵՐ, ՈՐՈՆՔ ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ ԵՆ ՌԻՍԿԸ	10
2. ՈՐՈՇ ԻՐԱԿԻՃԱԿՆԵՐ, ՈՐՈՆՔ ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ ԵՆ ՌԻՍԿԸ	11
3. ՊՐԱԿՏԻԿԱ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ, ՈՐՈՆՔ ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ ԵՆ ՌԻՍԿԸ ԿԱՄ ԱՏՃԱՌՈՒՄ ԵՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՄ ՀՈԳԵԿԱՆ ՏԱՌԱՊԱՆՔՆԵՐ	12
4. ԿԱՆԱՆՑ ՈՐՈՇԱԿԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐ, ՈՐՈՆՔ ԲԱՐՁՐ ՌԻՍԿԻ ՏԱԿ ԵՆ	21
ԻՆՉ ՈՐԱԿՆԵՐ ՊԵՏՔ Է ՈՒՆԵՆԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԱՅՍ ՀԱՐՑՈՎ ԶԲԱՂՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ	24
ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	25
ՀՂՈՒՄՆԵՐ	26

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն փաստաթուղթը նախատեսված է ազատագրված վայրերում մշտադիտարկում իրականացնող մարմինների համար: Փաստաթուղթում նկարագրվում են այն ռիսկերը, որոնց բախվում են ազատագրված կանայք, մասնավորապես՝ խոշտանգումների և դաժան վերաբերմունքի հետ կապված, ինչպես նաև միջոցոցները, որոնք կարող են ձեռնարկվել այդ ռիսկերը նվազեցնելու համար: Հրապարակման գլխավոր թեման ազատագրված կանանց վիճակն է քրեական արդարադատության համակարգում, այդուհանդերձ քննարկվող բազում հարցեր հավասարապես կիրառական են նաև այլ համատեքստում, օրինակ՝ հոգեբուժարաններում և ներգաղթողների պահման կենտրոններում:

Սույն փաստաթղթի կիզակետում կանանց իճակն է: Այն չի ներառում ռիսկերը, որոնց բախվում են տղամարդիկ, որոնք նույնպես ենթարկվում են գենդերային բռնության, հատկապես, եթե իրենց սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը չեն համապատասխանում գենդերային դերի¹ մասին հասարակության պատկերացումներին: Այն, ընդհանուր առմամբ, չի ներառում նաև հատուկ ռիսկերի քննությունը, որոնց բախվում են լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր (LGBT) անձինք ազատագրված վայրերում, քանի որ հեղինակը համարում է, որ այս թեման պահանջում է առանձին քննարկում: Փաստաթուղթը չի ներառում այն ռիսկերի քննարկումը, որոնց կանայք բախվում են անձնական ոլորտում կամ հասարակությունում, թեև ճանաչում է ավելի լայն համատեքստի և ազատագրված վայրերի միջև երկու ոլորտների բարդ փոխհարաբերությամբ պայմանավորված կապը: Հեղինակը հույս է հայտնում, որ այսպիսով փաստաթուղթը նպաստում է ուշադրություն պահանջող խնդիրների վերաբերյալ համապարփակ պատկերացում կազմելու գործընթացին:

Ազատությունից զրկված կանանց հետ աշխատանքի և կին իրավախախտների նկատմամբ կիրառվող՝ ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի կանոնների (Բանգկոկյան կանոններ)² ընդունումը կարևոր առաջընթաց է քրեական արդարադատության համակարգում կանանց հատուկ գենդերային կարիքների ճանաչման և դաժան վերաբերմունքի և խոշտանգումների դեմ երաշխիքների ներկայացման տեսանկյունից: Բանգկոկյան կանոնները

առանցքային ցուցիչ են հանդիսանում մշտադիտարկում իրականացնող մարմինների համար՝ ազատագրված վայրերում, կանանց վիճակի հետ կապված, իրենց պարտավորությունները կատարելու հարցում:³

Հարկ է նշել, որ Բանգկոկյան կանոնները քննարկվել և ընդունվել են քրեական արդարադատության համատեքստում, ինչը արտացոլվում է նաև դրանց վերնագրում: Այդուհանդերձ, Բանգկոկյան կանոնների «Ներածություն» բաժնի 14-րդ պարբերությունը սահմանում է. «Սույն կանոնների I մասը [Կանոններ 1-39] (...) կիրառելի է բոլոր կատեգորիաների ազատագրված կանանց համար, այդ թվում՝ քրեական կամ քաղաքացիական, կալանավորված կամ դատապարտված կին բանտարկյալների, ինչպես նաև դատարանի վճռով ուղղիչ կամ անվտանգության միջոցների ենթարկված կանանց համար»: Ավելին, Կանոնների ընդունումը նպաստում է ազատագրված կանանց նկատմամբ գենդերային զգայուն վերաբերմունքի մասին տեղեկատվական հիմքի ընդլայնմանը:⁴ Օրինակ՝ ապաստան փնտրող ազատագրվածների հետ կապված ստանդարտների վերաբերյալ ՄԱԲԳՀ ձեռնարկը հղում է անում Բանգկոկյան կանոնների դրույթներին:⁵

Բանգկոկյան կանոնները իրենց գործում որպես ցուցիչ կիրառելով՝ մշտադիտարկում իրականացնող մարմինները պետք է հաշվի առնեն, որ ռիսկերը, որոնց կանայք բախվում են բանտում⁶, հաճախ հասարակությունում գերակշռող անհասկացողության, նախապաշարմունքների և խտրական արակտիկաների արտացոլումն են: Ինչպես նշվում է Հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության ոլորտներում կանանց նկատմամբ բռնության վերացման մասին մոդելային ռազմավարությունների և գործնական միջոցառումների նախաբանում՝ «Կանանց նկատմամբ բռնությունը հաճախ հիմնված է հասարակության արժեքների, մշակութային սովորությունների վրա: Քրեական արդարադատության համակարգը և օրենսդիրները ունակ չեն ամբողջությամբ խուսափել այդ արժեքների ազդեցությունից, և, այդպիսով, կանանց նկատմամբ բռնության հանդեպ իրենց վերաբերմունքը երբեմն այնքան կոշտ չէ, որքան բռնության այլ տեսակների նկատմամբ...»⁷

Այսպես, կանանց՝ ազատագրկման վայրերում դաժան վերաբերմունքի և խոշտանգումների բախվելու մեծ ռիսկը խնդիր է, որը չի կարող լուծվել միայն այդ վայրերի վրա կենտրոնանալով: Ազատագրկման վայրերում կանանց հատուկ խոցելիության արմատային պատճառները հաճախ գտնվում են բանտային պատերից այն կողմ՝ չնայած այն հանգամանքին, որ ազատագրկման վայրերում այդ խոցելիությունը նշանակալիորեն աճում է:

Ի հավելում կանանց հատուկ խոցելիության՝ խոշտանգումների և դաժան վերաբերմունքի, հատկապես գենդերային հիմքով բռնության ենթարկվելու բարձր ռիսկայնության, կանայք ունեն նաև գենդերին հատուկ կարիքներ, որոնք ազատագրկման վայրերում հազվադեպ են բավարարվում (օրինակ՝ հատուկ առողջապահական կարիքները) կամ զգալիորեն սրվում են բուն ազատագրկման վայրերում գտնվելու փաստով (օրինակ՝ որոշ դեպքերում ընտանիքները լքվում են կանանց՝ բանտարկված կնոջ խարանի պատճառով): Այս համատեքստում առանձին մտահոգություն են ներկայացնում կին բանտարկյալների երեխաները: Քանի որ սովորաբար երեխայի առաջնային խնամակալները կանայք են՝ երեխային կարող է պատճառվել հսկայական վնաս, ինչպես մոր հետ բաժանումից, այնպես էլ միասին բանտարկությունից: Այսպիսով, երեխաների շահերից ելնելով, գնալով ավելի լայն տարածում է ստանում այն մոտեցումը, որ անհրաժեշտ է կիրառել ազատագրկման այլընտրանքներ, երբ պատիժ է սահմանվում հղի կամ երեխաներ խնամող կանանց հանդեպ, ինչը համապատասխանում է Բանգկոկյան կանոններին:⁸

Որոշ հանգամանքներում կանանց՝ գենդերին հատուկ կարիքների նկատմամբ ուշադրության բացակայությունը կարող է դիտարկվել որպես դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք կամ պատիժ կամ վերաճել դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի: Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման (SPT) հաստատում է. «Կանխարգելման աշխատանքների ծավալը մեծ է և ներառում է ազատագրկված անձանց իրավունքների ցանկացած խախտում, որոնք անուշադրության մատնվելու դեպքում կարող են վերաճել խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:⁹ SPT-ն խորհուրդ է տալիս նույն մոտեցումը կիրառել նաև Կանխարգելման ազգային մեխանիզմների աշխատանքում:¹⁰

Կանխարգելման ազգային մեխանիզմի մանդատը ենթադրում է ազատագրկված անձանց նկատմամբ վերաբերմունքի կանոնավոր դիտարկում՝ խոշտանգումներից և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից իրենց պաշտպանությունը ուժեղացնելու նպատակով: Կանխարգելման ազգային մեխանիզմներ իրականող մարմինները լիազորված են իշխանության համապատասխան մարմիններին ներկայացնել հանձնարարականներ՝ ազատագրկված անձանց նկատմամբ վերաբերմունքի և պայմանների բարելավման, ինչպես նաև խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի կանխարգելման նպատակով՝ հաշվի առնելով ՄԱԿ-ի համապատասխան նորմերը: Կանխարգելման ազգային մեխանիզմներ իրականող մարմինները նաև լիազորված են առաջարկներ և դիտարկումներ ներկայացնել գործող օրենքների կամ օրինագծերի վերաբերյալ:¹¹ Կարևոր է ընդգծել, որ ազատագրկման վայրեր այցելությունները թույլ են տալիս կանխարգելման ազգային մեխանիզմներին իրականող մարմիններին տեղեկատվություն ստանալ առաջին ձեռքից, սակայն դա համապարփակ կանխարգելման ռազմավարության միայն առաջին քայլն է: Երկարաժամկետ բարելավումների հասնելու համար կանխարգելման ազգային մեխանիզմներ իրականող մարմինները պարտավոր են հաշվի առնել ոչ միայն այցելությունների ընթացքում ի հայտ եկող հանգամանքները, այլև ավելի լայն համատեքստը՝ այդ խնդիրների հիմքում ընկած հնարավոր պատճառները հասկանալու համար:¹²

Սույն փաստաթղթի նպատակը մշտադիտարկում իրականացնող մարմիններին, մասնավորապես՝ կանխարգելման ազգային մեխանիզմներին աջակցելն է՝ ապահովելով, որ նրանց գործունեությունը ներառի գենդերային խնդիրների հատուկ ուսումնասիրությունը: Այդ նպատակով փաստաթուղթն ընդգծում է կանանց՝ խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի բախվելու հատուկ ռիսկը, հատուկ հանգամանքները, որոնք բարձրացնում են այդ ռիսկը, և այն միջոցառումները, որոնք հնարավոր է ձեռնարկել՝ ազատագրկման բոլոր վայրերում կանանց նկատմամբ խոշտանգումներն ու դաժան վերաբերմունքը կանխելու համար: Մշտադիտարկում իրականացնող մարմիններին խրախուսվում է օգտագործել այս փաստաթուղթը՝ իրենց մշտադիտարկման գործունեության մեջ գենդերային հեռանկարը ներառելու և ազատագրկման վայրերում կանանց վերաբերյալ թեմատիկ զեկույցներ պատրաստելու համար:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԻՆՉՈ՞Ւ ՊԵՏՔ Է ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁՆԵՆ ԱՅՍ ԽՆԴՐԻՆ

Ցայսօր կանանց՝ խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի բախվելու հատուկ ռիսկը սահմանափակ ուշադրության է արժանացել: Կանանց դեմ բռնությունը նվազեցնելու ջանքերը հիմնականում կենտրոնացված են այն խնդիրների վրա, որոնց կանայք բախվում են անձնական դաշտում կամ հասարակությունում, և շատ ավելի քիչ ուշադրություն է հատկացվում ազատագրկված կանանց նկատմամբ գեղեցիկացված բռնությանը: Թեև խոշտանգումների և դաժան վերաբերմունքի խնդիրը ընդհանուր առմամբ խորը մտահոգություն է առաջացնում հասարակությունում, այս հարցի գեղեցիկացված հայեցակետերը պատշաճ ուշադրության չեն արժանանում:

Իր թիվ 2 ընդհանուր մեկնաբանությունում խոշտանգումների կանխարգելման կոմիտեն նշում է, որ պետությունների զեկույցներում հաճախ պակասում է հստակ և բավարար տեղեկատվություն կանանց նկատմամբ Կոնվենցիայի իրականացման մասին և ընգծում, որ գեղեցիկացված առանցքային գործոն է խոշտանգումների կանխարգելման համար:¹³

2015 թ-ի ութերորդ զեկույցում խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեն նշում է. «գեղեցիկացված խնդիրներին բնորոշ հեռանկարները պատշաճ չեն քննարկվել և խոշտանգումների և դաժան վերաբերմունքի ռիսկերը ազատագրկված կանանց համար չեն արժանացել պատշաճ ուշադրության»: Այցերի ընթացքում հայտնաբերված օրինակները, որոնք անհանգստություն են առաջացնում, հետեւյալն են. «սեռական բռնությունը, որպես խոշտանգում կիրառելը, այդ թվում տրանսգենդերների նկատմամբ, պատշաճ ուշադրության պակաս նրանց առողջապահական խնդիրներին, հղի կամ իրենց հետ երեխաներ ունեցող կանանց վտանգավոր իրավիճակ, կանանց և տղամարդկանց առանձին պահելու կանոնի խախտում, ազատագրկված կականց հետ

աշխատող անձնակազմի պակաս, ինվազիվ խուզարկության, այդ թվում մարմնի ինտիմ մասերի, պրակտիկա, այդ թվում մերկացում ուրիշների աչքի առաջ, աշխատանքի, կրթության և հանգստի մատչելիության հարցում խտրականություն, հարազատների հետ շփման, այդ թվում մտերիմների և երեխաների այցելությունների սահմանափակում, որպես պատժի միջոց:»¹⁴

Մշտադիտարկում իրականացնող մարմինները կարող են կարևոր դերակատարություն ունենալ այս բացը լրացնելու և իրենց կառավարություններին խրախուսելու գործում: Ազատագրկման այն վայրերում, որտեղ պահվում են կանայք, մշտադիտարկում իրականացնող մարմինները կարող են գնահատել ռիսկային գործոնները և իշխանությունների կողմից կիրառվող երաշխիքները ինչպես նաև կառավարությանը և պատասխանատու դերակատարներին առաջարկել, Բանգկոկյան կանոնների համաձայն, բարելավել կանանց պաշտպանությունը դաժան վերաբերմունքից և խոշտանգումներից:

Կանանց ռիսկերը քննելու և դրանց կանխարգելման մասին համապարփակ պատկերացում կազմելու համար մշտադիտարկում իրականացնող մարմինները կարող են դուրս գալ ազատագրկման վայրերում հայտնաբերված փաստերի շրջանակից՝ խնդիրների հնարավոր արմատը գտնելու համար: Ազատության վայր այցելության ընթացքում հայտնաբերված խնդիրը կարող է արտաքին գործոնների հետևանք լինել, և այդ է պատճառը, որ անհրաժեշտ է, որպեսզի մշտադիտարկում իրականացնող մարմինները վերլուծեն նաև օրինական դաշտը, քրեական արդարադատության քաղաքականությունն ու պրակտիկան:¹⁵ Նման մոտեցման որոշ օրինակներ բերվում են այս փաստաթղթում:

ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԸ

1. ԳԵՆԴԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԼԻ ՄՈՏԵՑՈՒՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻՆ

ԱՀԿ-ն նկարագրում է «գենդերը» որպես սոցիալապես ամրագրված դերեր, վարք, վարքագիծ և հարաբերություններ, որոնք հասարակությունը վերագրում է կանանց և տղամարդկանց:¹⁶ Միևնույն անձի սեռը՝ տղամարդ կամ կին, կենսաբանական փաստ է, որը նույնն է բոլոր մշակույթներում: Այն, թե ինչ են նշանակում «կին» ու «տղամարդ» եզրերը անձի գենդերային դերում, կարող է տարբեր մշակույթներում տարբեր լինել:¹⁷ Սոցիոլոգիայում «գենդերային դերը» վերաբերում է այն բնութագրերին և վարքագծին, որոնք տարբեր մշակույթներ վերագրում են սեռերին:¹⁸

Գենդերային անհավասարությունը տարածում ունի բոլոր մշակույթներում՝ տարբեր աստիճանով: Կյանքի բազում ոլորտներում կանայք ավելի քիչ իշխանություն ունեն քան տղամարդիկ: Այդ անհավասարությունն էլ ավելի է սրվում այն հասարակություններում, որտեղ մյուս գործոնները, ինչպիսիք օրինակ կրոնական կամ մշակութային նորմերն են, կանանց ավելի ցածր են դասում: Իշխանության նման անհավասարակշռությունը և հասարակական կամ մշակութային հարբերությունները կամ հավատալիքները հաճախ ուժեղանում են փակ համակարգերում, որոնք իրենցից ներկայացնում են հասարակությունում գերակշռող արժեքների սրված արտացոլումը:

Համալիր մոտեցում գենդերային հավասարության հիմնախնդրին (Գենդերային մեյնսթրիմինգ) եզրը ծագել է Միացյալ Ազգերի լեզվային քաղաքականությունում 1997 թվականին, երբ ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհուրդը համաձայնության է եկել «Միացյալ ազգերի համակարգի բոլոր ընթացակարգերում և ծրագրերում գենդերային հեռանկարների ինտեգրման» անհրաժեշտության խնդրի շուրջ: Խորհուրդը սահմանել է գենդերային մեյնսթրիմինգը որպես «գենդերային մտահոգությունների ներառումը քաղաքականության, ծրագրերի և նախագծերի վերլուծություններում, ձևակերպումներում և մշտադիտարկման մեջ՝ գենդերային անհավասարությունը նվազեցնելու նպատակով»:¹⁹

«Գենդերային մեյնսթրիմինգ» հասկացությունը առանցքային նշանակություն ունի ազատագրկման վայրերի ընթացակարգերում և ծրագրերում: Բանտային փակ համակարգերում, որտեղ տվյալ հասարակությանը բնորոշ հարաբերություններն ու իշխանության կառուցվածքն արտացոլվում են ավելի սրված, կանանց անգործությունը և անգործության զգացումը նույնպես ուժեղանում են: Միևնույն ժամանակ, պարադոքսալ կերպով կանանց գենդերին հատուկ կարիքները էլ ավելի քիչ են ճանաչվում քան լայն հասարակությունում, այն փաստի պատճառով, որ ազատագրկման վայրերը տղամարդկանց գերիշխանության աշխարհ է, որտեղ գենդերի հետ կապված կարիքները քիչ ընկալելի են, բացի, թերևս, այն կարիքներից, որոնք կապված են երեխայի ծնունդի և հղիության հետ:

Գենդերային մեյնսթրիմինգի առաջխաղացումը ազատագրկման վայրերում երկարատև գործընթաց է, որը ներառում է ոչ միայն այդ վայրերում վերաբերմունքի, ընթացակարգերի և պրակտիկայի փոփոխություն, այլև լայն հասարակությունում երկարատև փոփոխությունների հասնելու նպատակ: Այդուհանդերձ, հատուկ օրենքների, կանոնների, քաղաքականության, ընթացակարգերի և պրակտիկայի փոփոխումը կարող է անմիջապես իրական ազդեցություն ունենալ կանանց՝ խոշտանգումներից և դաժան վերաբերմունքից պաշտպանության վրա:

Ամեն դեպքում, խոշտանգումների և դաժան վերաբերմունքի արգելքի ոլորտում անձնակազմի վերապատրաստումը, բողոքների անկախ հետաքննության անցկացումը և դաժան վերաբերմունքի առկայության դեպքում մեղավորներին արդարադատության կանչելը հիմնարար նշանակություն ունեն բոլոր ազատագրկված անձանց, այդ թվում՝ կանանց՝ խոշտանգումներից և դաժան վերաբերմունքից պաշտպանության համար: Հետևաբար մշտադիտարկում իրականացնող մարմիններին խորհուրդ է տրվում ուշադրություն դարձնել կանանց հետ աշխատող աշխատակազմի վերապատրաստման ծրագրերին՝ օգտագործելով Բանգկոկյան կանոնները՝ որպես թերությունները գնահատելու և առաջարկներ մշակելու չափորոշիչ:²⁰

2. ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՍԱՐՔ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի մասին կոնվենցիայի հոդված 1-ը սահմանում է «կանանց նկատմամբ խտրականություն» հասկացությունը նշանակում է «սեռի հիմքով ցանկացած տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որը նպատակ ունի կանանց համար սահմանափակել կամ վերացնել քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական կամ ցանկացած այլ բնագավառում, տղամարդկանց և կանանց, անկախ նրանց ամուսնական կարգավիճակից, հավասարության հիմքով, մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների ճանաչումը և կանանց կողմից այդ իրավունքների ու ազատությունների իրականացումը կամ դրանցից օգտվելը»:

Խտրականության ամենաձայրահեղ ձևը, որին բախվում են կանայք, սեռով պայմանավորված բռնությունն է, այսինքն «կնոջ դեմ բռնություն» միայն այն պատճառով, որ նա կին է կամ ազդում է կանանց վրա անհամաչափորեն: Դա ներառում է գործողություններ, որոնք պատճառում են ֆիզիկական, հոգեկան կամ սեռական վնաս կամ տառապանք, նման գործողությունների սպառնալիքներ, հարկադրանք և այլ ազատությունը սահմանափակող գործողություններ:»²¹ Սեռով պայմանավորված բռնությունը համարվում է դաժան վերաբերմունք, իսկ բռնության հանգամանքներից և բնույթից կախված՝ նաև խոշտանգում: Բռնաբարությունը սեռով պայմանավորված բռնության առավել ծանր ձևերից է:

Ազատագրկման վայրերում կանանց կարող են բռնաբարել խոստովանանք կորզելու, նվաստացնելու կամ ապամարդկայնացնելու նպատակով կամ պարզապես օգտվելով նրանց բացարձակ անգործությունից: Բռնաբարությունը կարող է լինել նաև սեռական ծառայությունների տեսքով, որոնք կին դատապարտյալները ստիպված են լինում մատուցել ապրանքներին կամ արտոնությունների հասանելիություն ունենալու կամ պարզապես մարդու հիմնարար իրավունքներից օգտվելու համար: Ի հավելում, սեռական բռնությունը կարող է կատարվել տղամարդ բանտարկյալների կողմից, երբեմն նաև՝ բանտապահների մասնակցությամբ:

Լայնորեն ճանաչված է, այդ թվում՝ ՄԱԿ-ի Խոշտանգումների գծով հատուկ զեկուցողների կողմից և տարածաշրջանային իրավունքում, որ բռնաբարությունը հանդիսանում է խոշտանգում, եթե այն կատարվում է կամ անմիջականորեն պաշտոնակատար անձանց կողմից, կամ իրենց հրահարմամբ, համաձայնությամբ կամ գիտությամբ:²² Նախկին Հարավսլավիայի համար հիմնված Միջազգային քրեական դատարանը իր վճիռներում նույնպես ճանաչել է,

որ բռնաբարությունը կամ սեռական բռնության այլ ձևերը որոշակի հանգամանքներում հանդիսանում են խոշտանգում:²³

Բռնաբարության ենթարկված կանայք ոչ միայն պետք է հաղթահարեն հոգեբանական տրավման և դիմակայեն հնարավոր հղիության ու բռնաբարության հետևանքով առողջական այլ խնդիրներին, այլև ամոթի զգացումն ու սոցիալական ստիգման, որին բախվում են բռնաբարության ենթարկված կանայք հատկապես այն հասարակություններում, որտեղ կանանց նկատմամբ խտրականությունը տարածում ունի մշակութային և կրոնական նորմերի պատճառով: Ազատագրկման վայրերում բռնաբարված շատ կանայք որոշում են չբարձրաձայնել իրենց հետ կատարվածի մասին ինչպես արդեն նշված, այդպես էլ այլ պատճառներով, ինչպիսիք են իշխանությունների կողմից պատշաճ պատասխանի բացակայությունը, կամ հնարավոր վրեժխնդրությունից վախենալը:

Ազատագրկման վայրերում կանանց նկատմամբ բռնությունը, բացի բռնաբարությունից, ներառում է նաև բազում այլ գործողություններ: Դրանք են բռնաբարության սպառնալիքները, հպումները և սեռական բնույթի նվաստացումները, մեխանիկական զսպման միջոցների օգտագործումը ծննդաբերության ժամանակ, կուսության թեստերը և այլն: Այլ գործողություններ կարող են դաժան վերաբերմունք հանդիսանալ՝ կախված դրանց կատարման ձևից, հիմքից և հաճախականությունից: Այդ պրակտիկաները մանրամասնորեն քննվում են հաջորդ գլխում:

Բանտերում կանայք խտրական վերաբերմունքի են բախվում շատ այլ ձևերով նույնպես, ինչպես իրենց գենդերի, այնպես էլ այն փաստի պատճառով, որ կանայք փոքրամասնություն են աշխարհի բոլոր բանտային համակարգերում՝ երկրների մեծամասնությունում կազմելով բանտային բնակչության 2-9 տոկոսը:²⁴ Այսպիսով, կանանց հատուկ կարիքները հաճախ հաշվի չեն առնվում ընթացակարգերի և ծրագրերի մշակման ժամանակ, իսկ իրենց պաշտպանության վերաբերյալ պահանջները հաճախ մատնվում են անուշադրության: Թեև հատուկ կանանց համար բանտերում կանանց կարիքներին ավելի շատ ուշադրություն է հատկացվում, ուշադրության պակասը գլխավոր կառավարման մակարդակում, ռազմավարությունների, քաղաքականության և ծրագրերի մշակման առումով, միևնույն է արտացոլվում է նման բանտերում պահման պայմանների վրա: Ի հավելում, կանանց բանտերի անհամաչափ քիչ քանակության պատճառով, կանայք հաճախ հեռու են գտնվում իրենց ընտանիքներից: Արդյունքում վտանգի տակ է դրվում կանանց առաջնային կարիքներից մեկը՝ ընտանիքի հետ շփումը:

Գենդերին հատուկ ծրագրերի և ծառայությունների հասանելիության բացակայությամբ, ինչպես նաև ընտանիքի հետ շփման սահմանափակ հնարավորությամբ արտահայտվող խտրականությունը ոչ միշտ է դաժան վերաբերմունք հանդիսանում, սակայն, որոշ հանգամանքներում, խտրականության նման ձևերը կարող են վերաճել դաժան վերաբերմունքի:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով կոմիտեն 2001 թվականին անհատական բողոքի քննման ընթացքում հաստատել է, որ կանանց դեմ խտրականությունը ներառում է դաժան վերաբերմունք, որն անհամաչափ է ազդում կանանց վրա, ինչպես

և ազատագրկման պայմանները, որոնք չեն անդրադառնում կանանց հատուկ կարիքներին (հղում կատարելով նաև Բանգկոկյան կանոններին): Կոմիտեի կողմից քննվող գործում, խնդրահարույց պայմանների հետ մեկտեղ, կին կալանավորը պահվում էր սառը նկուղում տեղակայված խցում՝ կանանց համար նախատեսված երկու խցերից մեկում, մինչդեռ ազատագրկված տղամարդիկ²⁵ պահվում էին վերևի հարկերում:

ՌԻՍԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐՆ ՈՒ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Ռիսկը, որին ենթարկվում են կանայք, որոշ համատեքստի, հանգամանքների, ընթացակարգերի, պրակտիկայի և պայմանների պարագայում աճում է: Բացի այդ, որոշ կանայք հատկապես խոցելի են: Ներքո քննարկվում են որոշ առանցքային գործոններ, որոնք հատուկ ռիսկ են ներկայացնում կանանց համար:

Վերանայված Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնները (2(2)²⁶ բանտերի ղեկավարությանը պարտավորեցնում են նկատի ունենալ բանտարկյալների, մասնավորապես խոցելի կատեգորիաների, անհատական կարիքները՝ նշելով նաև, որ հատուկ կարիքներով բանտարկյալների իրավունքները պաշտպանելու միջոցները անհրաժեշտություն են և չեն կարող դիտարկվել որպես խտրական:

1. ՈՐՈՇ ՀԱՄԱՏԵԾՍԵՐ, ՈՐՈՆՔ ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ ԵՆ ՌԻՍԿԸ

Ա.ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱՏԵԾՍԸ

Նախևառաջ, կարևոր է կրկնել, որ հասարակությունում գերակշռող արժեքներն ու վերաբերմունքը իրենց արտացոլումն են գտնում բանտերում, որոնք արտաքին աշխարհի մանրադիտակն են՝ կազմված մարդկանցից, որոնք նույն այդ հասարակության մասն են կազմում, կիսում են նույն մշակույթը, արժեքներն ու նախապաշարմունքները: Ինչպես նշել է խոշտանգումների գծով նախկին հատուկ զեկուցողը, հասարակության անտարբերությունը կամ անգամ աջակցությունը կանանց ստորադաս կարգավիճակին, խտրական օրենքների և մեղավորներին արդարադատության կանչելու համակարգային ծախսողումների հետ միասին, պայմաններ են ստեղծում կանանց ֆիզիկական և մտավոր տառապանքների²⁷ համար կյանքի բոլոր ոլորտներում, ներառյալ բանտերում:

Հասարակության նման վերաբերմունքի վառ օրինակ է ոստիկանությունում բռնության մասին հայտնող կանանց, առանց որևէ բան ձեռնարկելու, տուն ուղարկելը, քանի որ ընտանեկան բռնությունը հասարակության, այդ թվում՝ իրավապահ մարմինների կողմից ընկալվում է որպես ներընտանեկան խնդիր: Պետությունները հաճախ ծախողում են զոհերին արդարադատություն տրամադրելու հարցում՝ հետաքննության անարդյունավետ և կանխակալ մեխանիզմների և ընտանեկան բռնությունը որպես անձնական խնդիր ընկալելու պատճառով:

Հաճախ հետաքննության բնույթի ու մեթոդների պատճառով զոհերը ենթարկվում են կրկնակի վիկտիմիզացիայի:

Նման վերաբերմունքով և նախապաշարմունքով հասարակություններում, որտեղ մեղավորները կանոնավոր կերպով խուսափում են իրենց գործողությունների համար պատասխանատվություն կրելուց, և որտեղ դա ընկալվում է որպես նորմա, ազատագրված վայրերում, որտեղ կանայք էլ ավելի խոցելի են, հասարակական վերահսկողության նվազագույն մեխանիզմների բացակայության դեպքում, կանայք ենթակա են դաժան վերաբերմունքի և խոշտանգումների, այդ թվում՝ գենդերային բռնության բարձր ռիսկի:

Բ. ՕՐԵՆՍՊՐՈՎԱԿԱՆ ՀԱՄԱՏԵԾՍԸ

Մի շարք օրենքներ, ներառյալ նրանք, որոնք ուղղակիորեն չեն վերաբերում ազատագրվածներ, նշանակալի ազդեցություն ունեն ռիսկերի վրա, որոնց բախվում են կանայք: Դրանք կարող են ներառել քրեական և քրեական դատավարությանը առանչվող օրենքներ, որոնք խտրականացնում են կանանց²⁸ կամ թույլ չեն տալիս դատարաններին հաշվի առնել կանանց կենսագրությունն ու հանգամանքները կալանավորման կամ բանտարկման վճիռ կայացնելիս²⁹, մարդկանց թրաֆիքինգի դեմ օրենքներ, որոնք չեն ապահովում զոհերին անհրաժեշտ պաշտպանությամբ և անգամ պահանջում են հետապնդել և պատժել նրանց, ինչը հանգեցնում է կրկնակի վիկտիմիզացիայի, բանտերը կառավարելու օրենսդրությունն ու կանոններ, որոնք հաշվի չեն առնում կանանց հատուկ կարիքները, անօրինական միգրանտներին և ապաստան փնտրողներին վերաբերող օրենքները, որոնք ճանապարհ են հարթում այս խմբի անձանց կանոնավոր ազատագրված համար, և հաշվի չեն առնում կանանց հատուկ կարիքները, ինչպես նաև իրենց պաշտպանությանը վերաբերող կարիքները, հոգեբուժարանների կառավարումը կանոնակարգող օրենքներն ու կանոնները, որոնք, հնարավոր է, հաշվի չեն առնում կանանց խոցելիությունն ու հատուկ կարիքները:

Թեև օրենսդրության փոփոխությունը ինքնին չի պաշտպանում կանանց խոշտանգումներից և դաժան վերաբերմունքից, այն մեկնարկի առանցքային կետ է նման փոփոխությունների համար: Հասարակության վերաբերմունքի, նախապաշարմունքի և խտրական օրենքների

փոփոխությունը երկարատև գործընթաց է: Այն համակարգված ջանքեր է պահանջում քաղաքացիական հասարակության կողմից՝ փոփոխությունների վերաբերյալ քարոզարշավ իրականացնելու համար, այդ թվում՝ օրենսդրական բարեփոխումներ, հանրային իրազեկում և կանանց, այդ թվում ազատագրված կանանց նկատմամբ խտրականության և բռնության, ինչպես նաև կանանց և նրանց ընտանիքների անդամների վրա գործած վնասակար ազդեցության մասին պարբերական հաշվետվություններ:

Մշտադիտարկում իրականացնող մարմինները կարող են, իրենց աշխատանքի համապարփակ մոտեցման շրջանակներում և իրենց հնարավորությունների և ռեսուրսների չափով, առանցքային դերակատարում ունենալ այս բոլոր գործողություններում: Մշտադիտարկում իրականացնող մարմինները բացառիկ հնարավորություն ունեն, հավաքագրված ինֆորմացիայի հիման վրա, կառավարությանը ներկայացնել իրավական դաշտի բարեփոխման առաջարկներ, որոնց նպատակն է նվազեցնել թերի իրավական կարգավորումների պատճառով կանանց առջև ծառացող ռիսկերը:

2. ՈՐՈՇ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ, ՈՐՈՇ ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ ԵՆ ՌԻՍԿԸ

Ա. ՈՍԽԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐԳԵԱՆՔԻ ՏԱԿ ՊԱՅԵԼ և ԿԱՆԱՆՔԻ ՏԱԿ ՊԱՅԵԼ

Բոլոր ազատագրվածները ձերբակալումից անմիջապես հետո հայտնվում են խոշտանգումների և դաժան վերաբերմունքի ենթարկվելու բարձր ռիսկի շրջանում: Հենց այս ժամանակաշրջանում է, որ ազատագրվածները մեծ հավանականությամբ կարող են ենթարկվել հարկադրանքի և ճնշումների՝ նրանցից խոստովանական ցուցմունքներ կամ հանցագործության մասին տվյալներ ստանալու նպատակով: Կանայք այս ժամանակաշրջանում հատկապես անպաշտպան են սեռական ոտնձգություններից և բռնության այլ ձևերից, ինչը բազմիցս փաստագրել է խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեի կողմից:³⁰

Որոշ հասարակություններում, որտեղ կանանց դերը հասարակությունում և նրանց շփումները տղամարդկանց հետ, բացառությամբ ընտանիքի անդամների, խիստ սահմանափակ են կանանց նկատմամբ խտրական օրենքների և վերաբերմունքի պատճառով, տղամարդկանց կողմից անցկացվող հարցաքննությունը կարող է ահաբեկել կանանց և ծայրահեղ խոցելիության զգացում առաջացնել: Սա ներառում է նաև սեռական բռնության սպառնալիք՝ անկախ նրանից իրագործվում է այդ սպառնալիքը, թե՛ ոչ: Բացի այդ, այդ ժամանակահատվածում կանայք սովորաբար ավելի խոցելի են քան տղամարդ ազատագրվածները, քանի որ աշխարհի բոլոր երկրներում քրեական արդարադատությանը առերեսվող կանանց

մեծամասնությունը կրթական և տնտեսական ավելի ցածր կարգավիճակ ունեն քան տղամարդիկ (հաճախ իրենց ամուսիններից կախվածությամբ պայմանավորված) և ավելի քիչ իրազեկված են իրենց իրավունքների մասին: Բազմաթիվ հաղորդումներ կան այն մասին, որ ոստիկանական բաժանմունքում պահման ընթացքում անգրագետ և աղքատ կանանց ստիպել են ստորագրել խոստովանություններ, որոնց բովանդակությունը նրանք չեն հասկացել բռնության, հարկադրանքի կամ բռնության վախի պատճառով:

Նույն ռիսկերը, որոնց բախվում են կանայք ոստիկանական բաժանմունքում պահման ընթացքում, շարունակվում են կալանքի տակ պահվելու ընթացքում, հատկապես այն համակարգերում, որտեղ նախնական կալանքի համար պատասխանատու իշխանական մարմինն առանձնացված չէ իրավապահ մարմնից (օրինակ Ներքին գործերի նախարարությունը, որը պատասխանատու է անվտանգության և ոստիկանական ծառայության համար, Արդարադատության նախարարության փոխարեն, որին բնորոշ են քաղաքացիական կարգավիճակն ու մշակույթը):

Ի հավելումս խոշտանգումների և դաժան վերաբերմունքի անմիջական ռիսկերին և վախերին՝ կարևոր է հաշվի առնել նաև անգամ կարճ ժամանակահատված կալանքի տակ պահվելու ազդեցությունը կախյալ երեխաներ ունեցող կանանց վրա, հատկապես, եթե նրանք երեխաների միակ խնամակալն են: Սոր անգամ կարճ ժամանակահատվածով բանտում գտնվելը կարող է երկարաժամկետ բացասական ազդեցություն ունենալ երեխաների վրա և երեխաների համար խորը տագնապի մեջ պահել մայրերին:

Մշտադիտարկում իրականացնող մարմինները, որպես մեկնարկային կետ³¹ ընդունելով Բանգկոկյան կանոններն ու վերանայված Նվազագույն ստանդարտ կանոնները, կարող են գնահատել, արդյոք օգտագործվել են վերոնշյալ միջոցները, կալանավորված կանանց խոշտանգումներից և դաժան վերաբերմունքից պաշտպանելու համար, և անհրաժեշտության դեպքում հանդես գալ այդ պաշտպանության միջոցների բարելավման վերաբերյալ առաջարկություններով: Այդ միջոցները ներառում են բժշկական հետազոտությունների անցկացում առողջապահության անկախ աշխատակիցների կողմից՝ ընդունելիս, ազատ արձակելիս և այլ հաստատություն տեղափոխելիս, ընտանիքի հետ շփման ապահովում, իրավաբանական խորհրդատվության մատչելիություն, ազատագրված կանանց վերահսկողություն իրական սեռի ներկայացուցիչների կողմից իրականացում, կին և տղամարդ ազատագրվածների խիստ բաժանում, բողոքների քննման անկախ, արդյունավետ մեխանիզմի առկայություն, ինչպես նաև

Նախնական կալանքի հիմնարկների կանոնավոր մշտադիտարկում, որը իրականացնում են նաև կանանցով համավժած խմբերը:³²

Համակարգային կարևոր երաշխիք է նախնական կալանքը որպես խափանման միջոցի կիրառումը միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, ինչը ոչ միայն կաշառակարկի կնոջը ազատագրված մեջ գտնվելու ռիսկից, այլ նաև կնվազեցնի ազատագրված հետևանքով պատճառվող վնասը, հաշվի կառնվեն երեխաների շահերը: Նման մոտեցումը համապատասխանում է Բանգկոկյան կանոնների 58-րդ կանոնին, որը սահմանում է. «ըստ նպատակահարմարության և հնարավորության՝ պետք է կիրառվեն այլընտրանքներ նախնական կալանքին և ազատագրված ձևով պատիժներին»:

Սա մեկ օրինակ է, թե ինչպես մշտադիտարկում իրականացնող մարմինների առաջարկությունները կարող են դուրս գալ բանտային նեղ համատեքստից և ընդգրկեն առաջարկություններ դատական իշխանությունների կողմից խափան միջոցի ընտրության օրենսդրության և պրակտիկայի փոփոխության վերաբերյալ:

Բ. ՓՈՆԱԴՐՈՒՄԸ

Իրավապահ մարմինների մեկ հաստատությունից մյուսը տեղափոխվելիս ազատագրվածները դաժան վերաբերմունքի և խոշտանգումների հատուկ ռիսկի տակ են, քանի որ ազատագրվածներին բռնությունից պաշտպանող միջոցները համարյա ամբողջությամբ բացակայում են: Ազատագրված կանայք տրանզիտի ժամանակ³³ ենթակա են սեռական բռնության առավել բարձր ռիսկի, հատկապես, երբ կին և տղամարդ բանտարկյալները առանձնացված չեն լինում, և երբ կին բանտարկյալները տեղափոխվում են արական սեռի անձնակազմի կողմից: Միացյալ Թագավորությունում, օրինակ՝ ստուգման ընթացքում հայտնաբերվել է, որ «ուղեկցող մեքենաները կարող են խառը՝ կին, տղամարդ և երեխա ուղևորներ տեղափոխել, երբեմն՝ միաժամանակ»:³⁴

Զինաստանում, այդուհանդերձ, չինական գերագույն ատյանի դատարանի կողմից թողարկված «Ուղեկցության կանոնները» նախատեսում են, որ տեղափոխումները պետք է անցկացվեն միայն կին ուղեկցողների կողմից: Ավելին, կին և տղամարդ ամբաստյալներին չի թույլատրվում տեղափոխել նույն մեքենայով:³⁵ Հնդկաստանում ևս առանձին ուղևորափոխադրում է նախատեսված կին և տղամարդ բանտարկյալների համար, և ազատագրված կանայք պետք է ուղեկցվեն իգական սեռի պահակագործի և ոստիկանական մարմինների կողմից, թեև այս դրույթները սահմանափակվում են նախադատական բանտարկյալներով:³⁶

Կանանց հիգիենայի կարիքները հաշվի չառնելը, որը կանանց բանտերի փոքր թվաքանակի և դրանց հեռու տեղակայվածության հետևանք է, նույնպես կարող է անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք ներկայացնել: Միացյալ Թագավորության ստուգող մարմինները, օրինակ՝ հաղորդում են, որ բոլոր չափահաս բանտարկյալներից «միայն մի քանիսին է տրամադրվել «հարմարավետության ընդմիջում» զուգարանից օգտվելու համար: Փոխարենը բանտարկյալներին, իրենց փոքր խցերում օգտագործելու համար, առաջարկվում է հեղուկ կլանող գելից տոպրակ, մինչ մեքենան գտնվում է ընթացքի մեջ»: Այն դեպքերում, երբ կանայք և տղաները ուղևորվում են չափահաս տղամարդկանց հետ միասին, տղամարդիկ սովորաբար առաջինն են իջեցվում, ինչը կին բանտարկյալների համար երկարացնում է փոխադրման ժամանակը:³⁷

Թեև միջազգային երաշխիքները մասսամբ կարգավորում են ուղեմիջոցի օգտագործումը, վերանայված Նվազագույն ստանդարտ կանոնների կանոն 73(2)-ը նշում է, որ «փոխադրվող բանտարկյալների ուղեմիջոցը, որի օդափոխումը կամ լույսը անսարք են, կամ որը որևէ կերպով առաջացնում է ոչ անհրաժեշտ ֆիզիկական դժվարություններ, պետք է արգելվի»:

Մշտադիտարկում իրականացնող մարմինները պետք է ստուգեն՝ արդյոք գործում են անվտանգության համապատասխան մեխանիզմներ փոխադրման ժամանակ կանանց՝ խոշտանգումներից և դաժան վերաբերմունքից պաշտպանության համար: Այդ մեխանիզմները կարող են ներառել հետևյալը. ազատագրված կանանց կին անձնակազմի կողմից տեղափոխման ապահովում, ազատագրվածների տեղափոխման համար օգտագործվող մեքենաներում տեսադիտարկման համակարգի տեղադրում և այդ համակարգի օգտագործման վերահսկում, ինչպես նաև բողոքների ներկայացման և քննման անկախ և արդյունավետ կարգի ապահովում:

3. ՊՐԱԿՏԻԿԱ ԵՎ ԸՆԹՑՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆԸ ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ ԵՆ ՌԻՍԿԸ ԿԱՍ ԴԱՏՏԱՌՈՒՄ ԵՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՍ ՀՈԳԵԿԱՆ ՏԱՌԱՊԱՆՔՆԵՐ

Ա. ԸՆԴՈՒՄԱՆ ՈՉ ԴԱՏՏԱԾ ԵՐԱՇԽԻՔՆԵՐՆ ՈՒ ԳՆԱՅԱՏՈՒՄԸ

Ընտանիքի և փաստաբանի հետ անմիջապես կապվելու հնարավորության ապահովումը արդեն վաղուց ճանաչված է՝ որպես խոշտանգումներից և դաժան վերաբերմունքից պաշտպանելու միջոց: Բոլոր բանտարկյալները ձերբակալությունից անմիջապես հետո³⁸ իրավունք ունեն իրենց ընտանիքների անդամներին կամ իրենց ընտրությամբ այլ համապատասխան անձանց տեղեկացնելու կամ տեղեկություն փոխանցելու իրենց բանտարկության մասին: Միջազգային փորձը

ցույց է տվել, որ կանայք հատկապես խոցելի են բանտ մուտք գործելու ժամանակ: Շատ կանայք, որոնք առերեսվել են քրեական արդարադատության հետ, անկիրթ են կամ անգրագետ և իրազեկված չեն իրենց իրավունքների մասին: Շատ երկրներում ազատագրվումը կամ բանտարկությունը հանգեցնում են կանանց նկատմամբ հատուկ ստիգմայի, որը խորացնում է նրանց տառապանքները: Բանտարկված կանանց մեծամասնությունը մայրեր են, և երեխաների ու ընտանիքի հետ բաժանումը կարող է վնասաբեր ազդեցություն ունենալ նրանց հոգեկան առողջության վրա:

Մշտադիտարկում իրականացնող մարմինները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն կին բանտարկյալների ընդունման ընթացակարգերին և գնահատեն կանանց մատուցվող աջակցությունը այդ ժամանակահատվածում՝ համաձայն Բանգկոկյան կանոնների, որոնք պահանջում են բանտային իշխանություններին ապահովել նրանց «հարազատների հետ կապվելու հնարավորությամբ, օրինական խորհրդատվության հասանելիությամբ, բանտային կանոնների և կանոնակարգերի, բանտային ռեժիմի մասին տեղեկատվությամբ՝ իրենց հասկանալի լեզվով, իսկ օտար ազգությունների դեպքում՝ նաև հյուպատոսական ներկայացուցիչների հասանելիությամբ»:³⁹

Մշտադիտարկում իրականացնող մարմինները պետք է հաշվի առնեն նաև, որ ընդունման ժամանակը այն կետն է, երբ անհատական գնահատման միջոցով պետք է որոշվեն բանտարկյալների ռիսկերը և կարիքները, և ստուգվի՝ արդյոք կանանց ընդունման ժամանակ գնահատումն իրականացվել է գենդերային առանձնահատկությունների հաշվառմամբ, ինչպես պահանջում են Բանգկոկյան կանոնների դրույթները⁴⁰, բանտարկության ամբողջ ընթացքում կանանց հատուկ կարիքները բավարարելու նպատակով՝ այդպիսով նվազեցնելով ազատագրվման բացասական ազդեցությունը նրանց հոգեկան առողջության վրա և աջակցելով նրանց վերաինտեգրմանը հասարակությունում:

Բ. ԲԺՇԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ ՈՒ ՇՐՋԱՆԱԿԸ

Ընդունելության ժամանակ բժշկական հետազոտությունների անցկացումը առանցքային է իրավապահ մարմինների կողմից կատարված խոշտանգումների և դաժան վերաբերմունքի փաստերի հայտնաբերման, մեղավորներին պատասխանատվության կանչելու զոհերին անհրաժեշտ օգնություն և աջակցություն մատուցելու համար: Երբ սեռական բռնության և բռնության այլ ձևերի մասին բողոքները անուշադրության են մատնվում, մեծանում է հավանականությունը, որ ազատագրվման վայրերում բռնությունը թաքնված կմնա իշխանություններից, ինչը, իր

հերթին, կհանգեցնի կին բանտարկյալների նման բռնություններից նվազ պաշտպանվածությանը:

Մշտադիտարկում իրականացնող մարմինները պետք է պարզեն՝ արդյոք կին բանտարկյալների ընդունման ժամանակ բժշկական հետազոտությունը ներառում է համապարփակ հետաքննություն՝ հայտնաբերելու համար, այդ թվում՝ սեռական բռնության և բռնության այլ ձևերի դեպքերը, որոնց կարող էին ենթարկվել կանայք մինչ բանտ փոխադրվելը, ինչպես պահանջում են Բանգկոկյան կանոնները:⁴¹ Մշտադիտարկում իրականացնող մարմինները պետք է ստուգեն՝ արդյոք հաստատության աշխատակազմում առկա են իգական սեռի բժիշկներ՝ նման հետազոտությունների անցկացման համար, հատկապես, եթե կին բանտարկյալը խնդրում է այդ մասին: Եթե հնարավոր չէ, և կին բանտարկյալների ցանկության հակառակ՝ հետազոտությունը իրականացնում է տղամարդ բժիշկը⁴², մշտադիտարկում իրականացնող մարմինները պետք է ստուգեն՝ արդյոք հետազոտությանը ներկա է լինում կին աշխատակից:⁴³

Բանգկոկյան կանոնների կանոն 7-ը սահմանում է բանտային ղեկավարության պարտավորությունները, երբ բժշկական հետազոտությունները բացահայտում են, որ նախորդ ազատագրվման ժամանակ կին բանտարկյալը ենթարկվել է սեռական բռնության, բռնաբարության կամ բռնության այլ ձևերի:⁴⁴ Հարկավոր է, որ մշտադիտարկում իրականացնող մարմինները պարզեն՝ արդյոք այս Կանոնի դրույթները արտացոլված են բանտային օրենսդրության մեջ, արդյոք դրանք ներառված են անձնակազմի վերապատրաստման ծրագրում և գնահատեն՝ արդյոք դրանք կիրառվում են պրակտիկայում:

Ընդունման բժշկական հետազոտությունները խիստ կարևոր են նաև կանանց գենդերին հատուկ առողջապահության կարիքները գնահատելու և անհատական կարիքների հիման վրա առողջապահական ծրագրեր մշակելու համար, որպեսզի երաշխավորվեն կանանց ֆիզիկական և հոգեկան առողջության պաշտպանությունը ու դրա առաջնադասումը ազատագրվման ամբողջ ընթացքում: Այդ պատճառով մշտադիտարկում իրականացնող մարմինների համար կարևոր է նաև ուսումնասիրել ընդունման ժամանակ կատարվող բժշկական հետազոտությունների ընթացակարգերն ու պրակտիկան, հատկապես՝ արդյոք դրանք ներառում են կանանց՝ գենդերին հատուկ առողջապահական կարիքների սահմանում, ինչպես պահանջում են Բանգկոկյան կանոնները⁴⁵ և անհրաժեշտության դեպքում, առաջարկություններ պատրաստել բժշկական հետազոտությունների որակի բարելավման և շրջանակի մեծացման մասին:

Կին բանտարկյալների ընդունելության բժշկական հետազոտությունները, որոնք

կատարվում են սեռական բռնության նշանների հայտնաբերման և սեռական և վերարտադրողական առողջապահական կարիքները որոշելու համար, ոչ մի դեպքում չի կարելի խառնել կուսության թեստերի հետ, որոնք արվում են որոշ երկրներում՝ բոլորովին այլ նպատակներով: Կուսության թեստերը կանանց նկատմամբ խտրականության կոպիտ ձև են ներկայացնում և դիտարկվում են որպես կանանց նկատմամբ բռնության տեսակ:⁴⁶ Դրանք պետք է կտրականապես արգելվեն:

Այն տեղերում, որտեղ նման պրակտիկա է գործում, մշտադիտարկող խմբերը պետք է իրենց կանխարգելիչ գործունեությունում ներառեն կուսության թեստերի հետ կապված օրենսդրության և պրակտիկայի հետազոտությունները և հանդես գան համապատասխան օրենքների և պրակտիկայի արգելքի առաջարկությամբ:

2011 թվականի դեկտեմբերին Կահիրեի դատարանը կարգադրել է արգելել ռազմական բանտերում ազատագրված կանանց նկատմամբ կուսության ստիպողական թեստերի կիրառումը: Որոշումն ընդունվել է Տահիրիի հրապարակում ձերբակալված ցուցարարի գործի հիման վրա: Իրավապաշտպան կազմակերպությունները հայտնում են, որ եգիպտական զորքերը լայնորեն կիրառում էին այս պրակտիկան՝ որպես պատիժ:⁴⁷

9. ԿԻՆ ԵՎ ՏՐԱՄԱՐԴ ԲԱՆՏԱՐԿԱՅԱԼՆԵՐԻՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՅԵԼՈՒ ԽԱՆՏՈՒՄ

Վերանայված Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնները հստակ սահմանում են, որ ազատագրված կանայք պետք է պահվեն ազատագրված տղամարդկանցից ֆիզիկական առանձնացման պայմաններում՝ առաջիններին սեռական ոտնձգությունից և չարաշահումներից պաշտպանելու համար:⁴⁸ Բանտում երիտասարդ աղջիկներին ավելի տարիքով բանտարկյալների կողմից սեռական և այլ ձևերի չարաշահումներից պաշտպանելու համար՝ անչափահաս կին բանտարկյալները պետք է առանձնացվեն մեծահասակ կանանցից:⁴⁹

Որոշ երկրներում սկսվել է կիրառվել կին և տղամարդ բանտարկյալների միջև սահմանափակ շփման թույլտվության պրակտիկան, որը կատարվում է մանրակրկիտ ընտրության և վերահսկողության միջոցով: Նման պրակտիկան կարող է նպաստել բանտային կյանքի որոշակի նորմալիզացմանը և թույլ տալ կին բանտարկյալներին օգտվել բանտային ծրագրերի ավելի մեծ բազմազանությունից: Այդուհանդերձ նման պրակտիկան ոչ մի դեպքում չպետք է կիրառվի առանց կին բանտարկյալների համաձայնության և կարող է իրականացվել միայն այն դեպքում, երբ բանտային ղեկավարությունը պատրաստ է ստանձնել մանրակրկիտ ընտրության և մշտական

վերահսկողության պատասխանատվությունը⁵⁰ երաշխավորելու համար նրանց ապահովությունը:

Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի այցելությունների զեկույցներից ստորև բերված օրինակներում երևում է, թե ինչ ձևերով է այս պահանջը խախտվում, և ինչպես է բանտային անձնակազմը աչք փակում կանանց նկատմամբ սեռական բռնության վրա, կամ նույնիսկ մասնակցում դրանում:

«Խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեն նկատել է, որ Սան Պեդրո Սուլա քաղաքի բանտում կանայք, որոնք կազմում են բանտարկյալների աննշան մասը, չեն պահվում տղամարդկանցից առանձին: Նկատվել են կանանց և տղամարդկանց միջև թեթև հարաբերություններ, և տղամարդկանց ներկայություն կանանց խցերում: Ելնելով իրեն հասած տեղեկություններից և սեփական դիտարկումներից՝ ԽԿԵ-ն բավարար հիմքեր ունի կարծելու, որ այցելված երկու բանտերում որոշ ազատագրված կանայք զբաղվում են մարմնավաճառությամբ.... Համակարգողի խոսքերով՝ կանայք չեն ցանկանում պահվել տղամարդ բանտարկյալներից առանձին, քանի որ ապրում են ապրանքների հաշվին, որոնք իրենք վաճառում են տղամարդկանց իրենց այցելությունների ժամանակ: Պատասխանելով ԽԿԵ ներկայացուցչի հարցադրմանը՝ համակարգողը պատասխանել է, որ կանայք չեն ենթարկվում սեռական ոտնձգությունների, քանի որ գլխավոր համակարգողը հետևում է կարգի պահպանմանը: ԽԿԵ ներկայացուցիչները նկատել են, որ որոշ կին բանտարկյալների հրահանգվել է, թե ինչպես պետք է պատասխանեն հարցերին, և նկատել են նրանց՝ որոշ թեմաներից խոսելու դժկամությունը:⁵¹

....կանանց թեև առանձնացված էր տղամարդկանցից մետաղական փակվող դռնով: Այդ դռնը պահում էր տղամարդ բանտարկյալ կանաչ համազգեստով: Գործնականում, պատվիրակությունը դիտարկել է, թե ինչպես է պահակ բանտարկյալը այլ տղամարդկանց (այդ թվում՝ բրիգադավարի) հետ մի քանի անգամ առանց զգուշացման անցել կանանց թև:»⁵²

Այսպիսով, մշտադիտարկում իրականացնող մարմինները պետք է ստուգեն ոչ միայն կանանց և տղամարդկանց մասնաշենքերի առանձնացված լինելը, այլև այդ առանձնացման պահպանումը գործնականում: Նրանք պետք է զննատես նաև այն հավանականությունը, որ աշխատակազմը, այդ թվում՝ իգական սեռի, կարող է կանանց և տղամարդկանց միջև շփումը արգելելու փոխարեն, հակառակը՝ թույլատրել նման շփումը, կամ, ինչպես երևում է վերը բերված օրինակներում, նպաստել դրան:

Դ. ՎԵՐԱՅՈՒՄԱԿԱՆ ՄԱՐԿԱՆ/ԽԱՌԸ ՍԵՌԻ ԱՆՁՆԱԿԱԾՄԻ ԿՈՐՄԻՏԵ

Կանայք սեռական ունեցությունների և նույնիսկ բռնության ռիսկի տակ են, եթե արական սեռի անձնակազմը ներառված է նրանց վերահսկողության մեջ, և հատկապես, եթե արական սեռի անձնակազմը օժտված է՝ կին բանտարկյալների հետ աշխատելու անմիջական շփման դիրքում: Լավագույն դեպքում նման գործողությունները ներառում են կանանց հետևից լրտեսություն, երբ նրանք իրենց անձնական տարածքում են՝ բաղնիքում կամ զուգարանում, բնակեցման տարածքների ներխուժում, երբ նրանք մերկ վիճակում են, վատագույն դեպքում՝ սեքսի պահանջ ծառայությունների և բարիքների դիմաց և համակարգային բռնաբարություններ: Կանայք, որոնք բողոքում են չարաշահումներից հաճախ ոչ մի պատասխան չեն ստանում իշխանություններից, իսկ արական սեռի անձնակազմը վրեժխնդիր է լինում:

ճանաչելով կանանց խոցելիությունը սեռական չարաշահումների նկատմամբ՝ վերանայված Նվազագույն ստանդարտ կանոնները արգելում են արական անձնակազմի ցանկացած մասնակցություն կանանց բանտերի վերահսկողությանը:⁵³ Այդուհանդերձ, այս կանոնը շատ երկրներում չի կիրառվում, երբեմն իգական սեռի անձնակազմի անբավարար թվի, երբեմն էլ աշխատանքային հավասար պայմաններ ունենալու մտահոգության պատճառով, իսկ որոշ դեպքերում այն պատճառով, որ խառը սեռի անձնակազմը ընկալվում է որպես բանտային կյանքը նորմալիզացնող պրակտիկա: Զիչ թվով երկրներում խառը սեռի անձնակազմն ապացուցել է իր «նորմալիզացնող» օգուտները: Նման մոտեցումը հիմնականում կապված է նշանակալի թվով պատրաստված աշխատակիցների առկայության, երաշխիքների խիստ պահպանման, կոնֆիդենցիալ բողոքների մեխանիզմի արդյունավետության և անկախ ստուգումների առկայության հետ: Այն հասարակություններում, որտեղ «նորմալ» է այն, ինչ ցանկալի է (օրինակ՝ որտեղ սեռով պայմանավորված խտրականությունն ու բռնությունը գերիշխում են), այն համակարգերում, որտեղ մարդու իրավունքների հանդեպ ունեցությունը բանտերում լայն տարածում ունի և որտեղ մարդկային և ֆինանսական ռեսուրսների սահմանափակվածությունը խոչընդոտում են աշխատակազմի պատշաճ պատրաստվածությանը, նման քաղաքականության ռիսկը, իր հնարավոր հետևանքներով, շատ բարձր է բանտարկյալների համար: Օրինակ՝ բազմիցս փաստագրվել և զեկուցվել է ԱՄՆ խառը սեռի աշխատակազմի քաղաքականություն որդեգրած բանտերի՝ արական սեռի աշխատակազմի կողմից սեռական չարաշահումների, այդ թվում՝ բռնաբարությունների մասին:⁵⁴

Վերանայված Նվազագույն ստանդարտ կանոնները շատ հստակ են այս խնդրի շուրջ, իսկ Բանգկոկյան կանոնները, որոնք լրացնում են վերանայված Նվազագույն ստանդարտ կանոններին, այս առումով նույնպես որևէ փոփոխություն չեն պարունակում: Մշտադիտարկում իրականացնող մարմինները պետք է ի նկատի ունենան այս կանոնները՝ որպես ցուցիչ ռիսկային գործոնների գնահատման և առաջարկությունների պատրաստման համար: Սակայն, եթե հակառակ Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն կանոններին և Բանգկոկյան կանոններին, ինչպես նաև մշտադիտարկում իրականացնող մարմինների առաջարկություններին՝ արական սեռի աշխատակիցներին թույլատրվում է աշխատել կանանց բանտերում, մշտադիտարկում իրականացնող մարմինները պետք է ստուգեն՝ արդյոք տղամարդ աշխատակիցները իրավասու են կանանց անմիջական վերահսկում իրականացնելու, ունեն արդյոք հասանելիություն կանանց անձնական տարածքներին, օրինակ՝ ննջարաններին, բաղնիքներին կամ զուգարաններին, և արդյոք հնարավորություն ունեն հետևել այդ տարածքների ներսում կատարվողին: Հավաքագրված տեղեկատվության հիմքի վրա՝ մշտադիտարկում իրականացնող կազմակերպությունները կարող են այդուհետ համապատասխան առաջարկություններով հանդես գալ, նվազագույնը նման պրակտիկաների դադարեցման շուրջ: Կարևոր է հիշել, որ կին բանտարկյալները կարող են բռնության ենթարկվել իգական սեռի աշխատակիցների կողմից ևս: Հետևաբար, կին բանտարկյալներին բռնությունից պաշտպանելու մեխանիզմները անհրաժեշտ են նաև այն բանտերում, որտեղ վերահսկողությունն իրականացվում է բացառապես իգական սեռի աշխատակիցների կողմից: Մշտադիտարկում իրականացնող մարմինները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն բանտերի բոլոր աշխատակիցների պատրաստվածությանը, ինչպես պահանջում են Բանգկոկյան կանոնները⁵⁵, ինչպես նաև բանտարկյալների բողոքների ներկայացման և քննման կոնֆիդենցիալ մեխանիզմների մշակմանը:⁵⁶ Նրանք պետք է գնահատեն նաև, արդյոք կին բանտարկյալները, որոնք բողոք են ներկայացնում բանտում բռնության մասին, ստանում են անհրաժեշտ պաշտպանությունը, աջակցությունն ու հոգեբանական օգնությունը, ինչպես պահանջում են Բանգկոկյան կանոնները, այն ժամանակ, երբ իրենց բողոքները քննվում են իշխանական անկախ մարմինների կողմից:⁵⁷ Նման հետազոտության անցկացումը պետք է ներառի բանտային օրենսդրության և հնարավորության դեպքում նաև պրակտիկայի ուսումնասիրություն:

Անձնական խուզարկումները զգայուն հարց է բոլոր բանտարկյալների, հատկապես կանանց համար՝ հաշվի առնելով կին բանտարկյալների բնորոշ կենսագրությունը, որը հաճախ ներառում է իրենց նկատմամբ սեռական բռնություն: Բոլոր հասարակություններում և հատկապես այնտեղ, որտեղ կանայք ստորադաս դերում են տգամարդկանց նկատմամբ, և նրանց սեռականությունը բռնաճնշված կամ մերժված է, խուզարկումները կարող են ծայրաստիճան նվաստացուցիչ լինել և անգամ վնասող, եթե անց են կացվում հակառակ սեռի կողմից:

Որոշ համակարգերում, որտեղ կանանց վերահսկման համար պատասխանատու են տղամարդ բանտապահները կամ, որտեղ ներդրված է խառը սեռի աշխատակազմի քաղաքականություն, կին բանտարկյալները կարող են խուզարկվել արական սեռի անձնակազմի կողմից: Սա կարող է ներառել գոտկատեղից ներքև խուզարկումներ կամ խոշոր խուզարկումներ, որոնք անձնակազմը կարող է օգտագործել կանաց անպարկեշտ կերպով շոշափելու և սեռապես նվաստացնելու համար: Կանայք կարող են ենթարկվել լրիվ մերկացմամբ խուզարկումների և մարմնի ինվազիվ (անձնական) խուզարկումների:⁵⁸ Որոշ երկրներում կանայք համակարգային կերպով ենթարկվում են լրիվ մերկացմամբ խուզարկումների՝ արական սեռի անձնակազմի ներկայությամբ և կարող են նվաստացվել այդ ընթացքում:

Անգամ այն տեղերում, որտեղ գործընթացում ներառված է միայն իգական սեռի անձնակազմը, լրիվ մերկացմամբ խուզարկումներն ու մարմնի ինվազիվ խուզարկումները կարող են նվաստացնել խուզարկվող կանանց արժանապատվությունը, եթե դրանք համակարգային և կամայական բնույթ են կրում, և, եթե չեն հարգվում խուզարկվող կանանց անձնական տարածքն ու արժանապատվությունը:

Մշտադիտարկում իրականացնող մարմինների համար կարևոր է ստուգել՝ արդյո՞ք Բանգկոկյան կանոնների և վերանայված Նվազագույն ստանդարտ կանոնների (Կանոններ 52)՝ այս չափազանց զգայուն հարց ին վերաբերող դրույթները կիրառվում են կանանց բանտերում: Դրանք խուզարկումներից պահանջում են առաջնորդվել միջազգային ստանդարտներն ու նորմերը հաշվի առնող օրենքներով և կարգավորումներով և հարգել անհրաժեշտության և համաչափության սկզբունքը: Դրանք նախատեսում են նաև, որ խուզարկումները պետք է ղեկավարվեն մարդու արժանապատվության և անձնական տարածքի հարգմամբ (Կանոն 50): Բանգկոկյան կանոնների Կանոն 19-ն արտացոլում է այս սկզբունքները՝ պահանջելով բանտային իշխանություններից արդյունավետ միջոցառումներ իրականացնել՝

ապահովելու համար կին բանտարկյալների արժանապատվության պաշտպանությունը խուզարկումների ընթացքում: Վերանայված Նվազագույն ստանդարտ կանոնների Կանոն 51-ը հստակ ընդգծում է, որ այդ խուզարկումները չպետք է «օգտագործվեն ոտնձգելու, ահաբեկելու կամ բանտարկյալների անձնական տարածք անհարկի ներխուժելու նպատակով»:

Մշտադիտարկող խմբերը պետք է հաշվի առնեն, որ մարմնի ինվազիվ խուզարկումները (մերկացմամբ և մարմնի խոռոչների խուզարկումները) կամ ընդհանրապես չպետք է կիրառվեն, կամ պետք է իրականացվեն միայն օրենքով սահմանված բացառիկ հանգամանքներում, խուզարկության բոլոր մնացած միջոցները կատարելուց հետո:⁵⁹

Բանգկոկյան կանոնները (Կանոն 20) կոչ են անում զարգացնել խուզարկման այլընտրանքային մեթոդները, ինչպիսիք են սթանավորող սարքավորումները՝ փոխարինելու լրիվ մերկացմամբ խուզարկումներն ու մարմնի ինվազիվ խուզարկումները, խուսափելու համար մարմնի ինվազիվ խուզարկումների հոգեբանական և, հնարավոր է, ֆիզիոլոգիական բացասական ազդեցությունից: Մշտադիտարկող խմբերը պետք է օգտագործեն այս կանոնը փաստահավաք գործունեություն ծավալելիս և առաջարկությունների մեջ:⁶⁰

Այն տեղերում, որտեղ կիրառվում են խուզարկումներ, Բանգկոկյան կանոն 19-ը նախատեսում է, որ դրանք պետք է իրականացվեն միայն «իգական սեռի, խուզարկման մեթոդների պատշաճ պատրաստվածություն անցած անձնակազմի կողմից, և հաստատված ընթացակարգերի համաձայնությամբ»:⁶¹

Նման խուզարկումների անցկացումը հաճախ հանձնարարվում է բժշկական անձնակազմին: Նորմալ հանգամանքներում առողջապահական անձնակազմը չպետք է ներգրավվի բանտերում խուզարկումներին, քանի որ խուզարկումները բանտային անվտանգության ընթացակարգերի մաս են, և բժիշկների նման գործողությանը բժիշկների մասնակցությունը կարող է հակասել պացիենտի առողջությունը պաշտպանելու իրենց պարտավորությանը:⁶² Այդուհանդերձ, ծայրահեղ դեպքերում, հատկապես եթե կալանավորը համապատասխան խնդրանք է հայտնել, բժշկի մասնակցությունը մարմնի ինվազիվ խուզարկման մեջ կարող է արդարացված լինել՝ խուզարկման ժամանակ բանտարկյալին վնասելը կանխելու տեսանկյունից: Նման դեպքերում խուզարկումը կարող է անցկացվել բանտի բժշկից բացի այլ բժշկական մասնագետի կողմից՝⁶³ ցանկացած տեսակի վնասից պաշտպանելու համար՝ միաժամանակ պահպանելով բանտային բժշկի և բանտարկյալի միջև վստահության մթնոլորտը, քանի որ խուզարկումը, ըստ էության, անվտանգության հարց է և ոչ բժշկական հետազոտություն:⁶⁴

Նման խուզարկում իրականացնող բժիշկը պետք է տեղեկացնի բանտարկյալին, որ բժշկական կոնֆիդենցիալության պայմանը չի կիրառվում խուզարկություններում, և որ խուզարկման արդյունքները հայտնվելու են իշխանություններին:

Որպես այլընտրանք, մարմնի խոռոչի խուզարկումները կարող են ղեկավարվել բժշկական պատրաստություն անցած նույն սեռի աշխատակիցների կողմից, որոնք բանտի կանոնավոր առողջապահական ծառայության մաս չեն կազմում կամ «հիգիենայի, առողջության և ապահովության հարցերում բժշկական մասնագետի կողմից պատշաճորեն պատրաստված» աշխատակիցների կողմից:⁶⁵

Մշտադիտարկում իրականացնող մարմինները պետք է ստուգեն նաև՝ արդյոք գրանցվում է լրիվ մերկացմամբ խուզարկության և ինվազիվ խուզարկության յուրաքանչյուր դեպք՝ խուզարկության պատճառների, արդյունքների և թույլատվության անպայման նշումով, ինչպես պահանջում է վերանայված Նվազագույն ստանդարտ կանոնների Կանոն 52-ը:

2. ՄԵԿՈՒՄԻ ԲԱՆՏԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ/ ԿԱՐԳԱՊԱՅԱԿԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Փաստագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ մեկուսի բանտարկությունը կարող է ունենալ ծայրահեղ հոգեբանական, իսկ երբեմն ֆիզիոլոգիական բացասական ազդեցություն:⁶⁶ Ստամբուլյան հայտարարությունը առաջարկում է, որ «մեկուսի բանտարկության օգտագործումն այդ պատճառով պետք է հասցվի նվազագույնի»⁶⁷ և ի թիվս այլոց բացարձակապես արգելվի հոգեկան հիվանդ բանտարկյալների նկատմամբ:⁶⁸

Խոշտանգումների դեմ կոմիտեն, Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեն և ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ հատուկ հանձնակատարը ճանաչել են երկարատև մեկուսի բանտարկության ֆիզիկական և հոգեբանական բացասական հետևանքները, և մտահոգություն հայտնել դրա կիրառման վերաբերյալ:⁶⁹

Մեկուսի բանտարկության վերաբերյալ աճող մտահոգությունների աճի լույսի ներքո՝ վերանայված Նվազագույն ստանդարտ կանոնները ներկայացրել են հստակ ուղեցույցներ և սահմանափակումներ այս պրակտիկայի օգտագործման վերաբերյալ: Վերջինները պահանջում են օրենքով կամ համապատասխան ընթացակարգով թույլատվություն են պահանջում «բանտի ընդհանուր բնակչությունից՝ ցանկացած տեսակի հարկադիր առանձնացման համար, ներառյալ՝ քաղաքականությունը ու ընթացակարգերը, որոնք կառավարում են հարկադիր

առանձնացման կիրառումը, վերանայումը, դրա ընդունումն ու դրանից ազատումը» (Կանոն 37): Կանոնները սահմանում են մեկուսի բանտարկությունը որպես «օրը 22 կամ ավելի ժամով բանտարկություն՝ առանց մարդկային իմաստալից շփման» և արգելում են դրա անսահմանափակ կամ երկարատև կիրառումը (առավելագույնը 15 օր) (Կանոններ 43 և 44):

Այս բացարձակ արգելից բացի Կանոնները հստակեցնում են, որ «մեկուսի բանտարկությունը պետք է օգտագործվի միայն որպես ծայրահեղ միջոց առանձնահատուկ դեպքերի համար, հնարավորինս կարճ ժամկետով, ենթակա լինի անկախ գնահատման և թույլատրված լինի իրավասու մարմնի կողմից» (Կանոն 45*(1)): Ավելին, Կանոնները կոչ են անում միջոցներ ձեռնարկել մեղմելու հնարավոր բացասական ազդեցությունը, որ առաջանում է բանտարկյալների՝ բանտի ընդհանուր բնակչությունից առանձնացումից (Կանոն 38(2)):

Կանայք բանտ մուտք գործելու պահից հոգեկան առողջապահության գոյություն ունեցող կարիքների կամ բանտում զարգացող հոգեկան առողջության խախտումների հատուկ ռիսկի տակ են: Այդ պատճառով նրանք բարձր ռիսկային խումբ են ներկայացնում մեկուսի բանտարկության հոգեբանական բացասական ազդեցության հանդեպ զգայունության պատճառով, ինչպես դա ցույց է տալիս վերոնշյալ օրինակը, որում նկարագրված է բարձր հնչեղություն ունեցող կանադական մի գործ:

2007 թվականին Կանադայի Օնտարիո քաղաքում հոգեկան խանգարումներ ունեցող 19 տարեկան կին բանտարկյալը ինքնասպանություն է գործել, այն ժամանակ, երբ բանտապահները կանգնած էին իր առանձնախցի դուրսը՝ նայելով և տեսանկարահանելով իրեն: Բանտապահներին հրահանգվել էր չմիջամտել, քանի որ դա ինքնավնասման առաջին դեպքը չէր բանտարկյալի կողմից: Իր կյանքի վերջին տարին աղջիկն անց է կացրել մեկուսի խցում, 17 անգամ տեղափոխվել բանտից բանտ՝ փոխելով 9 բանտ երկրի տարբեր մարզերում՝ իր հոգեկան հիվանդության համար բավարար բուժում չստանալով: Սույն գործով հետաքննական աշխատանքները շարունակվում են:⁷⁰

Հղի, կրծքով կերակրող կամ բանտում իրենց հետ երեխաներ ունեցող կանանց դեպքում մեկուսի բանտարկությունը վնասում է ոչ միայն կանանց, այլև նրանց երեխաների հոգեկան առողջությանը՝ պատժելով այդպիսով երեխաներին ևս՝ հնարավոր երկարատև բացասական ազդեցությամբ: Նմանապես կարող է խաթարվել հղի կամ նոր ծննդաբերած կանանց առողջությունը: Հաշվի առնելով ռիսկային այս գործոնները՝ մշտադիտարկող խմբերը պետք է գնահատեն՝ արդյոք

կարգապահական առանձնացման տեսքով պատիժը օգտագործվում է հղի, նորածին ունեցող կամ կրծքով կերակրող մայրերի նկատմամբ և մշակեն առաջարկություններ՝ նման պրակտիկան դադարեցնելու, ինչպես պահանջում է Բանգկոկյան կանոնների Կանոն 22-ը, որն արգելում է մեկուսի ազատագրվման օգտագործումը այս կատեգորիայի կանանց նկատմամբ: Նրանք պետք է հաշվի առնեն նաև, որ որպես պատիժ արգելված միջոցառումը էլ ավելի անընդունելի, եթե կիրառվում է առանց կարգապահական իրավախախտման տեղի ունենալու, և ձևակերպեն իրենց առաջարկությունները սրա հիման վրա:

Բացի այդ, հաշվի առնելով Ստամբուլյան հայտարարությունն ու միջազգային իրավագիտությունը՝ հարկավոր է պարզել՝ արդյոք մեկուսի բանտարկությունը կիրառվում է հոգեկան խանգարումներ ունեցող, ինչպես նաև նախկինում ինքնավնասման և ինքնասպանության փորձեր կատարած կանանց նկատմամբ և համապատասխան առաջարկություններ կազմել նման կատեգորիայի կանանց նկատմամբ այս պրակտիկայի արգելքի վերաբերյալ: (Տես նաև Բաժին 4(c)):

Է. ՉՍՊՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՈՉ ՊԱՏԵԱՃ ԵՎ ԶԱՐԱՐԱՑՎԱԾ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Բանտարկյալների նկատմամբ մեխանիկական զսպման միջոցների կիրառումը մեկ այլ խիստ զգայուն հարց է: Չսպման միջոցները նվաստացուցիչ են բոլոր բանտարկյալների համար, և, եթե դրանք օգտագործվում են անհարկի և երկարաժամկետ, խախտվում է բանտարկյալների հետ արժանապատիվ վարվեցողություն պահանջը:⁷¹ Վերանայված Նվազագույն ստանդարտ կանոնները հստակ սահմանափակում են դնում ֆիզիկական զսպման միջոցների օգտագործման վրա:⁷² Դրանք արգելում են բնույթով նվաստացուցիչ և ցավ պատճառող զսպման գործիքների օգտագործումը, ինչպես նաև զսպման միջոցների՝ որպես կարգապահական սանկցիայի օգտագործումը: Չսպման այլ գործիքները կարող են օգտագործվել, միայն երբ դրանք թույլատրված են օրենքով և ծառայում են հատուկ նպատակների (օրինակ՝ փախուստների կանխարգելման, եթե այլ մեթոդները ձախողել են բանտարկյալների և այլոց կողմից վնասը կանխելու հարցում): Ավելին, դրանք պետք է կիրառվեն, միայն երբ վերահսկողության մյուս ձևերը այլևս չեն կարողանում արդյունավետ արձագանքել առկա ռիսկին, և մեթոդը պետք է հնարավոր ամենաքիչ ինտրուզիվը և հանվի որքան հնարավոր է շուտ:⁷³

Ի հավելում, Բանգկոկյան կանոնները արգելում են զսպման գործիքների օգտագործումը կանանց հղիության, ծննդաբերության ժամանակ և անմիջապես ծննդաբերությունից հետո:⁷⁴

Չնայած դրան՝ շատ երկրներում շարունակում են զսպման միջոցների, օրինակ՝ կապանքների, օգտագործումը հղի կանանց հիվանդանոց տեղափոխելիս, գինեկոլոգիական հետազոտությունների և ծննդաբերության ժամանակ՝ հակառակ բժիշկների՝ հղիության և ծննդաբերության ժամանակ կապանքների օգտագործման դեմ կոչերին:⁷⁵ ԽԿԿ-ն նշում է, որ «... ժամանակ առ ժամանակ ԽԿԿ-ն հանդիպում է օրինակների, երբ հղի կանանց գինեկոլոգիական հետազոտությունների կամ ծննդաբերության ընթացքում կապանքներով⁷⁵ կամ այլ միջոցներով շղթայում են անկողնուն կամ այլ կահույքի⁷⁶: Սա բացարձակապես անթույլատրելի է և անպայման պետք է դիտարկվի որպես անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունք: Կարող են և պետք է գտնվեն անվտանգության կարիքներն ապահովելու այլ միջոցներ:⁷⁷

Մշտադիտարկող խմբերը պետք է ապահովեն, որ իրենց փաստաթուղթը գործունեությունը ներառի կանանց, հատկապես հղի, ծննդաբերող կամ ծննդաբերած կանանց նկատմամբ զսպման միջոցների կիրառման ուսումնասիրություն՝ ինչպես պահանջում են Բանգկոկյան կանոններն ու վերանայված Նվազագույն ստանդարտ կանոնները, որոնք հստակորեն արգելում են զսպման գործիքների օգտագործումը այս կատեգորիայի կանանց նկատմամբ:⁷⁸

Ը. ԳԵՆԴԵՐԻՆ ԴԱՏՈՒԿ ԴԻԳԻԵՆԱՑԻ, ՍԵՌԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՐՁԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈՉ ՊԱՏԵԱՃ ՏՐԱՄԱՐԻՈՒՄԸ

Բանտային ոչ բարվոք պայմաններն ու ծառայությունները, որոնք սրվում են գերբնակեցվածությամբ, լուրջ ազդեցություն ունեն բոլոր բանտարկյալների, այդ թվում՝ կանանց հոգեկան և ֆիզիկական առողջության վրա: Զանի որ այս փաստաթուղթը կենտրոնանում է միայն կանանց հատուկ կամ կանանց կողմից ավելի կտրուկ փորձառնվող կարիքների վրա, հատուկ ուշադրության արժանացել են միայն երկու հարց: Դրանք կանանց զենդեքին հատուկ հիգիենայի և առողջապահության պահանջներն են:

Կանայք, հատկապես դաշտան ունեցող, մենոպաուզա ապրող, հղի և բանտում երեխաների հետ պահվող կանայք, կարիք ունեն կանոնավոր ջրի հասանելիության: Կանայք կարիք ունեն նաև անվճար բաժանվող սանիտարական սրբիչների և բարձիկների հասանելիության, որպեսզի ստիպված չլինեն ամաչել դրանք խնդրելիս:⁷⁹ ԽԿԿ-ն կարծում է, որ տարրական կարիքների, ինչպես, օրինակ՝ սանիտարական բարձիկների տրամադրման ձախողումը կարող է համարվել նվաստացուցիչ վերաբերմունք:⁸⁰

Չառկապես անբավարար ռեսուրսներով երկրներում կանանց և բանտում իրենց հետ երեխաներ ունեցող մայրերի հատուկ հիգիենայի կարիքները հաճախ խաթարվում են: Նրանք

հաճախ ենթարկում են խտրականության, ինչը երևում է ԽԿԿ-ի Բենին այցելությունների վերաբերյալ զեկույցից բերված ներոնշյալ օրինակներում:

«Պատվիրակությունը դիտարկել է կնոջ, որը կալանքի տակ էր պահվում իր՝ 8 ամսական մերկ երեխայի հետ: Խցից մեզի և արտաթորանքի հոտ էր գալիս: Կինը պատմում էր, որ խցում սանիտարական դույլ չկա, քանի որ ոստիկանության աշխատակիցները խոստացել էին դուրս թողնել նրան զուգարանից օգտվելու համար, սակայն գիշերը նա ապարդյուն փորձեր էր արել կանչելու նրանց, և երեխան արտաթորել էր խցի անկյունում: Կինը միջոց չուներ մաքրելու խուցը: Խցում ճանճեր էին տոգոմ, իսկ երեխայի վրա մոծակի բազմաթիվ կծածներ էին: Առավոտյան աշխատակիցները եկել էին և տարել նրան խցի մոտ գտնվող զուգարանը: Պատվիրակությունը դիտարկել է նաև մեկ այլ խուց (5 մետրը լայնությամբ և 4.4 մետր բարձրությամբ), որտեղ պահվում էին հինգ տղամարդ ազատագրված: Այս խուցը ուներ հոսող ջուր և առանձին տարածք՝ զուգարանով և ցնցուղով:»⁸¹

«Բանտում... 4 շինություն կար, որտեղ քնում էին ազատագրվածները, սակայն մոտավորապես 60 կին, այդ թվում՝ մանկահասակ և անչափահաս: Իզական սեռի բոլոր չափահաս ազատագրվածները ստիպված էին քնել դրսում՝ տարածքի բացակայության պատճառով... Դրսի պայմանները ծայրահեղ տհաճ և հակահիգիենիկ էին, հատկապես հողի կամ երեխաներով կանանց համար:»⁸²

Մշտադիտարկող խմբերը պետք անընդհատ ստուգեն՝ արդյոք կանանց հատուկ հիգիենայի կարիքները ապահովվում են և արդյոք հղի, կերակրող և կախյալ երեխաներ ունեցող կանանց պահման վայրերը հաշվի են առնում իրենց և իրենց երեխաների հատուկ հիգիենայի կարիքները: Մշտադիտարկող խմբերը կարող են ավելի հեռու գնալ և օգտագործելով Բանգկոկյան կանոնները որպես մեկնարկային կետ՝ խրախուսել նման կատեգորիայի կանանց դեպքում բանտարկման փոխարեն այլընտրանքների օգտագործումը՝ կանանց այնպիսի պայմաններից պաշտպանելու համար, որոնք որոշ երկրներում հավասարեցվում են անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքին, և երեխաների շահերը հաշվի առնելու՝ ինչպես պահանջում են Բանկոկյան կանոններն ու երեխաների իրավունքների մասին կոնվենցիան:»⁸³

Կանանց գենդերին հատուկ առողջության իրավունքները, ներառյալ՝ նրանց վերարտադրողական և սեռական առողջության իրավունքները, շատ հաճախ են խախտվում բանտերում: Սա կարող է ներառել կանանց

համար առողջապահական պրոֆիլակտիկ ծառայությունների անհասանելիություն, որոնք հաշվի կառնեն գենդերին հատուկ կարիքները (օրինակ՝ արգանդի վզիկի կամ կրծքի բաղցկեղի հայտնաբերում), ինչպես նաև սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բուժման անհասանելիություն, այդ թվում՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ կամավոր տեստավորման, բուժման ու խնամքի, որոնց հանդեպ կանայք առավել խոցելի են:⁸⁴ Նշված անհասանելիությունը առկա է՝ չնայած նրան, որ սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունները լայնորեն տարածված են կին բանտարկյալների շրջանում իրենց բնորոշ կենսագրության պատճառով, որը կարող է ներառել իրենց նկատմամբ սեռական բռնություններ, մարմնավաճառություն և թմրամիջոցների օգտագործում: Մինչ հղիությունը, դրա ընթացքում և դրանից հետո կանանց տրամադրվող ծառայություններն ու խնամքը սովորաբար նույնպես ծայրահեղ անբավարար են:

Կարևոր է նշել նաև, որ որոշ հանգամանքներում բժշկական հետազոտությունները կարող են անմարդկային և նվաստացուցիչ լինել: Օրինակ, երբ կինը դիմում է առողջապահության կին մասնագետի կողմից հետազոտվելու և բուժվելու համար, և նրա ցանկությունը չարդարացված պատճառներով չի երաշխավորվում: Կին բանտարկյալների անձնական տարածքն ու արժանապատվությունը հետազոտությունների ընթացքում կարող են մերժվել նաև ինտիմ հետազոտություններին անվտանգության անձնակազմի ներկայությամբ (երբեմն արական սեռի): Գենդերային հիմքով բռնության ենթարկված կանանց համար, նման պրակտիկան կարող է հանգեցնել հսկայական տառապանքների և նվաստացման:

Մշտադիտարկում իրականացնող մարմինները պետք է գնահատեն՝ արդյոք գենդերին հատուկ առողջապահական ծառայությունները կամ նվազագույնը համայնքում հասանելի դրանց համարժեքները տրամադրվում են կին բանտարկյալներին, ինչպես պահանջում են Բանգկոկյան կանոնները:⁸⁵ Նրանք պետք է ստուգեն նաև՝ արդյոք, երբ կինը դիմում է կին բժշկի կամ բուժքրոջ կողմից հետազոտվելու կամ խնամվելու, դա նրան տրամադրվում է, բացի բժշկական միջամտություն պահանջող իրավիճակներից, իսկ եթե հետազոտությունն անց է կացվում արական սեռի բժշկի կողմից, արդյոք հետազոտության ընթացքում ներկա է լինում կին աշխատակից:⁸⁶ Մշտադիտարկող խմբերը պետք է պարզեն նաև՝ արդյոք կիրառվում է Բանգկոկյան կանոնների Կանոն 11-ը, որն արգելում է ոչ բժշկական անձնակազմի ներկայությունը բժշկական հետազոտության ընթացքում, սակայն նախատեսում է, որ անհրաժեշտության դեպքում ոչ բժշկական անձնակազմը կարող է ներկա լինել, եթե դա արդարացված է անվտանգության նկատառումներով կամ եթե կինը դիմել է

իզական սեռի ուղեկցորդի խնդրանքով, «նման անձնակազմը պետք է բաղկացած լինի կանանցից, իսկ հետազոտությունը պետք է անց կացվի՝ անձնական տարածքի, արժանապատվության և կոնֆիդենցիալության երաշխիքներն ապահովելով»:⁸⁷

Թ. ԸՆՏԱՆԵԿԱԼ ՇՓԱՆՆՈՒ ՈՂ ՊԱՏԵԱՆՑ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

Առանցքային խնդիրներից մեկը, որին առերեսվում են կին բանտարկյալները, Նրանց ազատագրված վայրի հաճախ իրենց տնից հեռու տեղակայումն է, որի պատճառը կին բանտարկյալների փոքր թվաքանակն է, և համապատասխանաբար կանանց բանտերի քչությունը: Սա դժվարացնում է կին բանտարկյալների ընտանիքներին իրենց հետ շփում պահպանելը: Համայնքի, ընտանիքի և հատկապես երեխաների հետ կապերի ընդհատումը հսկայական տառապանքներ և անհանգստություն է պատճառում կանանց, որոնցից շատերը երեխաների առաջնային խնամակալներն են: Որոշ երկրներում, որտեղ բանտերկալները չունեն պատշաճ հասանելիություն սնունդին և սննդի համար ապավինում են իրենց ընտանիքներին, կին բանտարկյալները կարող են խիստ անբարենպաստ իրավիճակում հայտնվել: Ի հավելում, այն տեղերում, որտեղ ամուսնական այցելությունները թույլատրված են, կին բանտարկյալները սովորաբար չեն օգտվում Նույն իրավունքներից, ինչ տղամարդիկ: Սա այն դաշտերից է, որտեղ՝ բանտային համակարգերի մեծ մասում, կին բանտարկյալների հանդեպ խտրական վերաբերմունք է ցուցաբերվում, որը խիստ բացասական հետևանքներ է թողնում վերջիններիս հոգեկան առողջության վրա: Այս իրավիճակը կարող է ավելի սրվել այն համակարգերում, որտեղ կարգապահական պատիժը ներառում է ընտանիքի հետ շփման կրճատում կամ արգելք:

Բանգկոկյան կանոնները իշխանությունների համար սահմանում են պատասխանատվություն՝ գործադրելու հատուկ ջանքեր կանանց՝ իրենց բնակության վայրին կամ այն վայրին, որտեղ նրանք կցանկանային ազատ արձակվել, մոտ տեղակայելու համար:⁸⁸ Նրանք նաև պահանջում են բանտային իշխանություններից հատուկ ջանքեր գործադրել խրախուսելու կին բանտարկյալների և նրանց ընտանիքների միջև կապերը և ապահովելու, որ կանայք բուժվեն կին բժշկի կամ բուժքրոջ կողմից և ունենան ամուսնական այցելությունների Նույն իրավունքն, ինչ տղամարդիկ:⁸⁹

Մշտադիտարկող խմբերը պետք է գնահատեն, արդյոք իրենց երկրների բանտային իշխանությունների կողմից նման ջանքեր գործադրվում են և մշակեն առաջարկություններ ապահովելու, որ կանայք ավելի մոտ տեղակայվեն իրենց տներին, ինչպես պահանջում են Բանգկոկյան կանոնները: Նրանք պետք է ստուգեն նաև՝ արդյոք, այն դեպքերում, երբ դա

հնարավոր է, բանտային իշխանությունները միջոցներ են ձեռնարկում մեղմելու կանաց համար ստեղծված անբարենպաստ իրավիճակը, և համապատասխան առաջարկություններով հանդես գան, եթե նման միջոցներ չեն ձեռնարկվել: Օրինակ՝ իշխանությունները այլ միջոցների հետ մեկտեղ կարող են աջակցել փոխադրմանը, կարող են ավելացնել կանանց թույլատրվող հեռախոսազանգերը, եթե բանտարկյալները հասանելիություն ունեն հեռախոսին և կարող են երկարացնել այցելությունների տևողությունը:⁹⁰

Մշտադիտարկող խմբերը պետք է որոշեն՝ արդյոք կարգապահական սանկցիաները ներառում են ընտանիքի հետ շփման արգելք և առաջարկություններ մշակել օրենսդրություններում և պրակտիկայում այս միջոցին վերջ տալու վերաբերյալ՝ ինչպես պահանջում են Բանգկոկյան կանոնները:⁹¹

Ժ. ԲԱՆՏԵՐՈՒՄ ԿԱՆՅԱԼ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ ՄԱՅՐԵՐԻՑ ԱՌԱՆՁԱՆՑՆԵՐՈՒ ՈՂ ՊԱՏԵԱՆՑ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Երկրների մեծ մասում կախյալ երեխաներին օրենքով թույլատրված է մնալ իրենց մայրերի հետ մինչև որոշակի տարիքը, որը սակայն տարբեր տեղերում տարբեր է: Կախյալ երեխաների հեռացումը բանտից, առանց պատշաճ կերպով հաշվի առնելու նրանց շահերը և առանց բանտից դուրս այլընտրանքային խնամք նախապատրաստելու, կարող է լուրջ հետևանքներ ունենալ ինչպես մոր, այնպես էլ երեխայի համար՝ հսկայական տառապանքներ և անհանգստություն պատճառելով մորը և հնարավոր երկարատև, էմոցիոնալ, զարգացման վրա ազդող և, հնարավոր է, ֆիզիկական վնաս պատճառելով երեխային: Բանգկոկյան կանոնները առաջին անգամ միջազգային ստանդարտներ են սահմանել երեխաներին բանտից հեռացնելու որոշում ընդունելու վերաբերյալ, ի հավելում կանոնների, որոնք կարգավորում են բանտում նման երեխաների հետ վարվեցողությունը: Նրանք պահանջում են, որ երեխային բանտից հեռացնելու որոշումները կատարվեն անհատական գնահատման հիման վրա, և մշտապես հաշվի առնեն երեխաների շահերը՝ ոչ մի դեպքում չկատարվելով առանց բանտից դուրս բավարար խնամքի նախապատրաստության:⁹² Խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեն, օրինակ, իր՝ Բրազիլիա այցելության մասին զեկույցում մտահոգություն է հայտնել այս սկզբունքի չկատարման վերաբերյալ:

«Խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեն իր մտահոգությունն է հայտնել այն մասին, որ երեխաներ ունեցող կին բանտարկյալները կորցրել են իրենց երեխաներին խնամելու իրավունքը, երեխաների 2 տարեկանը լրանալուց հետո, և որ որոշ երեխաներ հանձնվել են մանկատներ:

Ենթակոմիտեն առաջարկում է երեխաների՝ բանտում մայրերի հետ մնալու որոշումները միշտ կայացնել անհատական գնահատման հիման վրա՝ ելնելով երեխաների շահերից: Բացի այդ, ենթակոմիտեն պետությունից պահանջում է պարզաբանել երեխաների որդեգրման տալու պրակտիկան և նման իրավիճակներում միշտ կիրառել որդեգրման գործընթացը կարգավորող օրենսդրությունը:⁹³

Մշտադիտարկող խմբերը պետք է ներառեն իրենց երկրներում կախյալ երեխաների մայրերի հետ բանտում մնալու թույլտվության և նման երեխաների բանտերից հեռացման հետ կապված օրենքների և պրակտիկայի ուսումնասիրություն, ինչպես պահանջում են Բանգլոկյան կանոնների 49 և 52 Կանոնները, և անհրաժեշտության դեպքում առաջարկություններով հանդես գան օրենսդրությունը վերանայելու ու պրակտիկան փոխելու վերաբերյալ՝ ինչպես պահանջում են Բանգլոկյան կանոնները:

ԺԱ. ԱՇԱՏԱԶԴԿՈՒՄԸ՝ ՈՐՈՇԵ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Որոշ երկրներում կանայք պահվում են բանտերում՝ իրենց՝ զենդերային հիմքով բռնությունից պաշտպանության նպատակով: Նման դեպքերը ներառում են կանանց, ովքեր ենթարկվել են բռնաբարության և վտանգ կա հանցագործի կամ նրա հարազատների կողմից հետապնդումների, համոզելու, որ չվկայեն այդ մասին, և կանանց, որոնք անցել են մշակութային կամ կրոնական նորմերով պահանջված սահմանը՝ հայտնվելով «պատվի հիմքով սպանության» ռիսկի տակ: Որոշ երկրներում բանտերը կարող են օգտագործվել թրաֆիքինգի զոհերին պաշտպանելու համար:

Կանայք կարող են երկար ժամանակով պահվում են բանտում՝ իրենց պաշտպանության համար, ինչը, ինքն իրենով, կարող է դառնալ դաժան վերաբերմունք՝ ինչպես նշել է Խոշտանգումների հարցերով հատուկ զեկուցողը, օրինակ՝ Հորդանանի դեպքում, որտեղ կանայք կարող են կալանքի տակ պահվել անգամ մինչև 14 տարի ժամկետով, քանի որ նրանց սպառնում է «պատվի հիմքով բռնության» զոհ դառնալու վտանգը:⁹⁴ Ազատագրվում որպես «պաշտպանական» միջոց օգտագործելը խտրականության առանձնակի կոպիտ ձև է: Այն պատժում է զոհին կամ պոտենցիալ զոհին՝ հանցագործի փոխարեն, ավելին՝ վիկտիմիզացիայի է ենթարկում կանանց և ետ է պահում նրանց բռնաբարության և սեռական չարաշահումների մասին հայտնելուց:

Նման իրավիճակում հայտնված կանանց պաշտպանության լավագույն տարբերակը կլինի վերջիններիս ժամանակավորապես, անկախ մարմինների կամ սոցիալական ծառայությունների կողմից կառավարվող ապաստարաններում կամ ապահով տներում տեղակայելը՝ պայմանով, որ կինը բացահայտորեն ցանկանում է պաշտպանվել այդ կերպով:⁹⁵ Ցավոք, ապահով տների

պահանջարկն ավելի մեծ է քան առաջարկը, ինչը կարող է նշանակել, որ իրենց պաշտպանելու համար կանայք ստիպված են լինում, ժամանակավոր հիմքով, տեղակայվել ազատագրվման հաստատությունների կամ բանտերի առանձին բաժիններում:⁹⁶

Ճանաչելով որոշ երկրներում նման պաշտպանության անհրաժեշտությունը և ավելացված ռիսկը, որը այն կարող է առաջացնել նման կանանց համար՝ Բանգլոկյան կանոնները նախատեսում են. «... Կանանց պաշտպանության համար բանտարկության ժամանակավոր միջոցառումները պետք է կիրառվեն միայն անհրաժեշտության դեպքում, կնոջ պահանջով և դատական կամ այլ իրավասու մարմինների վերահսկողության պայմաններում: Պաշտպանական նման միջոցառումները չպետք է կիրառվեն կնոջ կամքին հակառակ»:⁹⁷ Երկարաժամկետ հեռանկարում պետությունները պարտավորություն են կրում մշակելու համապարփակ, իրավական, քաղաքական և ադմինիստրատիվ միջոցառումներ կանանց՝ բռնությունից պաշտպանության և կրկնակի վիկտիմիզացիայի կանխման համար, որպեսզի նման ծայրահեղ միջոցառումներ իրականացնելու անհրաժեշտություն չառաջանա:⁹⁸

Այն երկրներում, որտեղ նման պրակտիկան տարածված է, մշտադիտարկում իրականացնող մարմինները կարող են առանցքային դեր խաղալ նման կանանց (հատկապես նրանց, որոնք արդեն երկար ժամանակ կալանքի տակ են գտնվում) հայտնաբերման, հանգամանքների գնահատման և այլ միջոցառումներով պաշտպանություն ապահովելու միջոցով աջակցության հարցում՝ հեշտացնելով հկ-ների և ապաստարանները կառավարող կանանց խմբերի միջև կապերը, մշակելով առաջարկություններ փոխելու որոշ օրենքներ, որոնք թույլ են տալիս հանցագործներին խուսափել արդարադատությունից, մինչ իրենց զոհերը պաշտպանություն են փնտրում:

4. ԿԱՆԱՆՑ ՈՐՈՇԱԿԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐ, ՈՐՈՆՔ ԲԱՐՁՐ ՌԻՍԿԻ ՏԱԿ ԵՆ

Ա. ԱՐՁԻԿՆԵՐԸ

Աղջիկները բանտարկյալների ամենախոցելի խմբերից են՝ իրենց տարիքի, զենդերի և քիչ թվաքանակի պատճառով: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ազատագրված աղջիկների ճնշող մեծամասնությունը մինչ քրեական արդարադատության համակարգ մուտք գործել անցել են չարաշահումների միջով:⁹⁹

Աղջիկների փոքր թվաքանակի պատճառով «շատ երկրներում ոչ մի հատուկ կարգավորում կամ առանձնացած հաստատություն իրենց համար չի գործում»¹⁰⁰, սակայն հաճախ աղջիկները պահվում են տղաների հետ միասին, խառը սեռի անձնակազմով հաստատություններում, ինչը հանգեցնում է բռնության, այդ թվում՝ սեռական բռնության

մեծացող ռիսկի: ¹⁰¹ Ոստիկանական բաժանմունքներում ռիսկը հիմնականում բարձր է, և առանձնացում նախատեսվող կարգավորումները երբեմն գործում են միայն բանտերում և չեն ներառում ոստիկանական բաժանմունքները: Աղջիկները չարաշահումների են ենթարկվում նաև տարիքով մեծ կանանց և իգական սեռի անձնակազմի կողմից:

Որպես այլընտրանք, «տղամարդկանցից և տղաներից առանձնացումն ապահովելու համար, աղջիկները գտնվում են մեկուսացման մեջ պահվելու կամ իրենց տնից հեռու ազատագրվելու ռիսկի տակ»: ¹⁰² Ընտանիքից և համայնքից առանձնացման ազդեցությունը կարող է խորապես վնասել աղջիկների հոգեկան առողջությանը, էմոցիոնալ բարեկեցությանը, ինքնագնահատականին, սոցիալական և կյանքի հմտություններին ու ունակություններին, իսկ հոգեկան առողջության հարցերը հազվադեպ են լուծում ստանում:

Եղած ուսումնասիրությունները հաստատում են, որ աղջիկները շատ ավելի հաճախ են տառապում աֆեկտային խանգարումներից (օրինակ՝ ընկճախտից) և անհանգստության խանգարումներից, քան տղաները: ¹⁰³ Որպես հետևանք, աղջիկները իրենց վնասելու և ինքնասպանություն գործելու ավելի բարձր ռիսկի տակ են, քան տղաները կամ մեծահասակները: ¹⁰⁴

